

ԿՈՂՏՆՏԵՍԱԿԱՆԻ ՅԵՎ ԵՌՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ
ԲԱՆՎՈՐԻ ԳՐԱԳԱՐԱՆ

Վ. ԱՅՎԱԶՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ՆԱԽԱՏԵՍԵԼ
ՎԱՂՎԱ ՅԵՂԱՆԱԿԸ

551.5

Ա-55

ԳՅՈՒՂՆՐԱՏ

1936

ՅԵՐԵՎԱՆ

20 JUL 2010

ԿՈՒՏՆՏԵՍՈՎԱՆԻ ՅԵՎ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԲԱՆՎՈՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՍԽՀ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԻԳՐՈՍԵՏԵՈՐՈՒԹՅԱԿԱՆ ՎԱՐՁՈՒՔՅՈՒՆ

551.5

Ա-55

u

Վ. ԱՅՎԱԶՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ՆԱԽԱՏԵՍԵԼ
ՎԱՂՎԱ ՅԵՂԱՆԱԿԸ

11.02.2013

Խմբագրված է ՀՍԽՀ Հիդրոմեթ
վարչության գիտական խորհրդի
կողմից

ԱՌԱՋԱԲԱՆ

«Արդյունաբերության ապագաիզում բնությանը տիրա-
պետելը շատ ավելի մեծ չափի յե հասել, քան գյուղա-
տնտեսության բնագավառում, վերը փոխանակ տիրա-
պետելու բնությանը, ինքը կախում ունի բնությանից»:
(Ն Գ Ե Լ Ե)

Մեր յերկրի տնտեսությունը պլանային, սոցիալիստական
տնտեսություն է: Նա ամբողջապես կազմակերպվում և զե-
կազարվում է ժամանակակից գիտության հիմունքներով, վորով-
հետե մարդկային հասարակությունն իր ամբողջ արտադրական
գործունեյությունը, իր կյանքը կազմակերպում և ծավալում է
բնության ծոցում, բնության ուժերը նպատակահարմար ոգտա-
գործելու միջոցով: Այդ պատճառով, առանձնապես սոցիալիստա-
կան հասարակության համար, չափազանց կարևոր է գիտակա-
նորեն ուսումնասիրել բնության բոլոր յերևույթները և նրանց
ոգտակարության պայճաններն ու աստիճանը՝ մեր ժողովրդա-
կան տնտեսությանը ծառայեցնելու համար:

Բնության ամենակարևոր մասերից մեկն է մեղ շրջապա-
տող մթնոլորտը: Մթնոլորտում կատարվող յերևույթները և
նրանց առաջացման պատճառների ուսումնասիրությամբ գրադվող
գիտությունը կոչվում է ողերևութաբանություն (մետեորոլոգիա):

Յերնիով արագորին զարգացող սոցիալիստական տնտեսու-
թյան պահանջներից, կուսակցությունն ու խորհրդային իշխա-
նությունը խոշոր զարկ են տվել ողերևութաբանությանը—մեր
չայնածավալ յերկիրը ներկայումս ծածկված է ողերևութաբանա-
կան թիտ ցանցով:

Դիտությունը համեմատաբար թույլ գործադրում ունի
գյուղատնտեսության բնագավառում, ինչպես նշում է Նոգելսը:



1226
37

Այդ հասկանալի յե. անհատական մանր անտեսություններէ և ևս վերջացած գյուղատնտեսությունը յերբեք ի վիճակի չեր ոգտագործելու գիտությունը և տեխնիկան: Նա միանգամայն անագնական ե բնության «հասվոր» տարերքներէ հանդեպ:

Շնորհիվ կողեկտիվացման, մեր գյուղատնտեսությունը տեխնիկայի և գիտության ոգտագործման բնագավառում իբրև հազասորը չունի ամբողջ աշխարհում:

Գյուղատնտեսության բերքատվության բարձրացման և բացիտնալ կազմակերպման բնագավառում չափազանց կարևոր նշանակութիւն ունի յեղանակի ուսումնասիրությունը— ոգերևութաբանութիւնը: Ռացիոնալ գյուղատնտեսության կազմակերպման հիմնական հարցերից մեկն այս կամ այն շրջանի և կուտնտեսության տնտեսական պրոֆիլի վորոշման հարցն է, տեխնիկական կուլտուրաների արմատացման ու նոր հողային տարածութիւններէ յուրացման հարցը: Այդ խնդիրները զբաղեցնորեն լուծելու համար խոշոր նշանակութիւն ունի նաև տվյալ վայրի կլիմակայական պայմաններէ լուրջ ուսումնասիրութիւնը: Ոգերևութաբանական գիտելիքներն ոգտագործելով ամեն մի կուտնտեսութիւն կարող է որ առաջ վորոշել վաղվա նպատակից յեղանակը և համաձայն դրան գոտավորել կուտնտեսության աշխատանքները: Որինակ, յեթե նա իմանա, վոր վաղն ուժեղ անձրև է լինելու, միջոցներ ձեռք կառնի ավարտելու կիսածեծ կալը, կամ հավաքելու դաշտում հնձված խոտը, կամ արագացնել բացված բամբակի չանաքը և այլն:

Ոգերևութաբանութիւնը չափազանց խոշոր նշանակութիւն ունի նաև ողային, ջրային և ցամաքային տրանսպորտի համար:

Մառախուղները թույլ չեն տալիս ողանալին թոխչք կառարել, ամպրոպը, հանկարծակի հորդ անձրևը և այլն, յեթե նրանք նախատեսված չեն, ողանալի խորտակում կարող են առաջ բերել: Հայտնի յե նաև, թե ինչպիսի դժվարութիւններէ յե հանդիպում տրանսպորտը ձմեռը՝ բքի և սառնամանիքի ժամանակ, շոգենալիքի խորտակումը փոթորիկներէց և այլն: Խոշոր նշանակութիւն ունի ոգերևութաբանութիւնը նաև սագմական գործի ու հակագագային պաշտպանության համար:

Սակայն, վորպեսզի հնարավոր լինի լայն չափով ոգտագործել ոգերևութաբանութիւնը սոցալիստական տնտեսության և մասնավորապես գյուղատնտեսության բնագավառում, անհրաժեշտ է, վոր ամեն մի բանվոր ու կուտնտեսական մոտիկից ծա-

նաթ լինի, ուսումնասիրի այդ գիտութիւնը, գիտենա մթնոլորտի բաղադրիչ մասերը, նրանում տեղի ունեցող փոփոխութիւնները և նրանց պատճառները: Միաժամանակ ամեն մի աշխատավոր պետք է գիտենա, թե ինչպիսի հատկանիշներով պետք է վորոշել վաղվա յեղանակը և այլն:

Դժբախտաբար՝ չնայած ոգերևութաբանության վերին աստիճանի կարևոր նշանակութիւնը, հրապարակի վրա չափազանց քիչ են այդ խնդիրն նվիրված գրական աշխատութիւնները:

Մենք աշխատել ենք մեր գիրքը հնարավորության չափ մատչելի գարձնել աշխատավորական լայն մասսաներին, վոր նրանք կարողանան այս գրքի տվյալների հիման վրա հաշվի առնել յեզանակի տեղական հատկանիշներն ու վորոշել վաղվա յեղանակը:

Ոգերևութաբանական մասը շարադրված է, ըստ հնարավորին, մասսայական դպրոցական ծրագրերին համապատասխան՝ նրանց վորոշ չափով ողնած լինելու համար:

Անհրաժեշտ ենք համարում նշել, վոր գրքի շարադրութիւնը չնթացքում տեղի յե ունեցել վորոշ շտապողականութիւն. այդ հանգամանքը չեր կարող չանդրադառնալ գրքի վրա: Հուսով ենք, վոր քննադատութիւնը և արժեքավոր գիտողութիւնները մեզ կօգնեն հետագայում վերացնել այդ բացերը:

ՀԵՂԻՆԱԿ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Թե ինչպիսի յեղանակ ե սպասվում վաղը կամ մի քանի ժամ հետո, կարելի չե նախատեսել նաև «տեղական հատկանիշներն» միջոցով: Տեղական հատկանիշներ կոչվում են մթնոլորտում կատարվող բոլոր այն յերևույթները, վոր կարելի չե հայտարենել ավյալ տեղը դիտելով: Տեղական հատկանիշները հնարավորութուն են տալիս սպասվելիք յեղանակը ավյալ տեղի համար վորոշել վոշ ավելի, քան 12—18 ժամ առաջ:

Տեղական հատկանիշները լինում են ընդհանուր, վորոնք անցական հատկանիշ են համարվում բոլոր տեղերի համար, և մասնակի, վորոնք հատուկ են միայն ավյալ տեղին:

Տեղական հատկանիշների միջոցով յեղանակը նախատեսելու համար հարկավոր ե իմանալ. 1. ինչ բան ե յեղանակը, ինչպիսի ե կախված, ինչ տարրերից ե բաղկացած և 2. այն հատկանիշները, վորոնք ցույց են տալիս վերջիններիս մոտեցումը:

Տեղանակը կախում ունի այն բանից, թե վորտեղից և ինչպիսի ուղային հոսանք ե մեզ մոտ գալիս՝ կայուն, թե անկայուն, արոպիկական, բևեռային, թե արկտիկական. մեղ տաք, թե ցուրտ ֆրոնտան ե մոտենում, մենք ցիկլոնում ենք գտնվում, թե անտիցիկլոնում:

Վորպեսզի իմանանք, թե ինչ բան ե յեղանակը, պետք ե իմանանք, թե ինչ ե կատարվում մեր շրջապատում ողի մեջ: Հետևապես, յեղանակը նախատեսելու համար հարկավոր ե իմանալ, թե ինչ բան ե ողը, ինչպիսի յերևույթներ են տեղի ունենում ողի մեջ. պետք ե նաև ծանոթ լինել կայուն, անկայուն, արոպիկական, բևեռային և արկտիկական ողային դանգվածներին, տաք և ցուրտ ֆրոնտներին (ճակատներին), ցիկլոնին և անտիցիկլոնին: Պետք ե գիտենալ նաև, թե ինչպիսի հատկու-

թյուններ ունեն նրանք և ինչպիսի յեղանակ են բերում իրենց հետ: Հարկավոր է իմանալ նաև այն հատկանիշները: վորոնք ցույց են տալիս նրանց մոտենալը: Միայն այդ ժամանակ գիտակցաբար կվերաբերվենք յեղանակներին յերևույթներին, կկարողանանք բացատրել, թե ինչու յե յեղանակը փոխվում, ինչու յեն մթնոլորտային տեղումներ, շոգ, ցուրտ և այլն լինում:

Յեթե գիտենանք, թե ինչպիսի յեղանակ է լինում ցիկլոնում, անտիցիկլոնում, տաք և ցուրտ ֆրոնտներում, տարբեր ուղային զանգվածներում, ինչպես և այն հատկանիշները, վորոնք ցույց են տալիս նրանց մոտեցումը, կկարողանանք նախատեսել, թե վաղն ինչպիսի յեղանակ է լինելու:

1. Ողբ.— Ողբ մի գաղ է, վոր մենք չենք տեսնում, բայց շնչելու և քամու ժամանակ զգում ենք: Ողբի գլխավոր հատկություններից մեկն այն է, վոր արտաքին ճնշման փոխվելուց, հեշտությամբ լայնանում կամ սեղմվում է, վորի հետևանքով նրա ջերմաստիճանը փոխվում է: Ողբ տաքանալուց լայնանում ու թեթևանում է, իսկ ցրտից՝ սեղմվում և ծանրանում:

Յենթադրենք, վոր ողբի վորևե մասսա այս կամ այն պատճառներից վեր է բարձրանում: Մթնոլորտային ճնշումն ըստ բարձրության պակասում է, որինակ՝ սարի ներքևում ճնշումը մեծ է, իսկ վերևում՝ վորք: Ողբի մասսան վեր բարձրանալիս արտաքին ճնշումը (մթնոլորտային ճնշումը) պակասելու պատճառով այդ մասսան կսկսի լայնանալ, մինչև վոր ներքին և արտաքին ճնշումները հավասարվեն: Լայնանալու համար ողբի մասսան աշխատանք պիտի կատարի, իսկ աշխատանք կատարելու համար ջերմություն ծախսի, և վորովհետև այդ մասսան աշխատանք կատարելու համար վոչ մի տեղից (զրոից) ջերմություն չի ստանում, ուստի այդ ծախսած ջերմությունը նրա ջերմաստիճանի պակասելու հաշվին է կատարվելու, վորի պատճառով նրա ջերմաստիճանը կնվազի:

Ուրեմն, ողբ վեր բարձրանալուց ու լայնանալուց նրա ջերմաստիճանը պակասում է:

Հիմա յենթադրենք, թե ողբի վորևե մասսա ներքև (ցած) է իջնում, ներքևում արտաքին ճնշումը (մթնոլորտային ճնշումը) մեծանում է, վորից այդ մասսան սեղմվում է մինչև արտաքին և ներքին ճնշումների հավասարվելը: Սեղմվելու համար նրա վրա պիտի աշխատանք կատարվեց և այդ աշխատանքից ջերմություն

տացվեց, վորից ողբ տաքանալով՝ նրա ջերմաստիճանը բարձրացավ:

Հետևապես, ողբ ներքև իջնելիս, սեղմվելիս, ջերմաստիճանը բարձրանում է:

Իրտական հետազոտությունները ցույց են տվել, վոր չոր չհագեցած) ողբ^{*}) վեր բարձրանալով՝ յուրաքանչյուր 100 մետր բարձրության վրա նրա ջերմաստիճանը 1-ով նվազում է: Յեթե ողբ հագեցած է, յուրաքանչյուր 100 մետր բարձրանալիս նրա ջերմաստիճանը վոչ թե 1⁰ է նվազում, այլ մոտ 0,6⁰, վորովհետև նրա մեջ յեղած գոլորշին ջրային կաթիլների վերածվելիս առաջ է գալիս վորոշ ջերմություն (թագնված ջերմություն), վորը թույլ չի տալիս 1⁰ նվազելու: Ողբ ներքև իջնելիս, ամեն ժամանակ յուրաքանչյուր 100 մետր ներքև իջնելիս նրա ջերմաստիճանը բարձրանում է 1⁰:

Որինակ՝ ևետինն մի պարկ դնենք ջրի մեջ, լիքն ողբը նենք և կապենք, վոր ողբ դուրս չգա, իմանանք ողբի ջերմաստիճանը և ջրից պարկը հանենք: Ջուրն ավելի յե ճնշում գործ դնում քան ողբ: Յերբ պարկը ջրի մեջ էր, դրսից ճնշումը մեծ էր [բայց դրսի եներսի (ներքին) ճնշումները հավասարվելին իրար] իսկ յերբ ջրից հանեցինք, դրսի (արտաքին) ճնշումը պակասեց, և վորպեսզի արտաքին և ներքին ճնշումները հավասարվեն իրար, պարկի միջի ողբն սկսեց լայնանալ, Լայնանալու համար նա աշխատանք կատարեց, իսկ աշխատանք կատարելու համար իրենից ջերմություն ծախսեց, վորի պատճառով իր ջերմաստիճանը նվազեց:

Վերցնենք ողբով լցված մի օրվակ, բերանն այնպես խցանենք, վոր ողբ դուրս չգա. խցանն իջեցնելով սեղմենք ողբին, կտեսնենք, վոր սեղմվելուց ողբ տաքացավ, քանի վոր մենք նրա վրա աշխատանք կատարեցինք, աշխատանքից տաքություն ստացվեց, վորից և բարձրացավ ողբի ջերմաստիճանը:

2. Ջերմաչափ.— Այն գործիքը, վորով վորոշում են ողբի ջերմաստիճանը, կոչվում և ջերմաչափ: Ջերմաչափը բաղկացած է ապակե խողովակից, վորի ստորին ծայրն ուսուցիկ է և մեջը սնդիկ լրած: Խողովակի վրա կամ կողքերին, առանձին տախտակի վրա բաժանմունքներ են քաշած, իսկ բաժանմունքների

^{*}) Հագեցած կոչվում է այն ողբ, վորն այնքան գոլորշի յե պարունակում իր մեջ, վոր դրանից սվելի այլևս չի ընդունի:

կողքին թվեր են գրված, վորոնցով վորոշվում են ջերմության աստիճանները:

Ողի տաքանալուց խողովակի մեջ սնդիկը բարձրանում է, իսկ պաղեղը՝ իջնում: Օ-ից ցած աստիճանները ցույց են տալիս բացասական ջերմաստիճանները, իսկ զրոյից բարձր գտնվողոնները՝ դրական ջերմաստիճանները: Յեթե սնդիկի մակերևույթը գտնվի, ասենք՝ Օ-ից ցած 4-ի դիմաց, կլինի (-4°) մինուտ 4 աստիճան:

Ջերմաչափերը լինում են մի քանի տեսակի: Այն ջերմաչափը, վորի յերկու հաստատուն կետերի (սառցի հալման աստիճանի և մաքուր ջրի յեռման աստիճանի) միջև տարածությունը բաժանված է 100 աստիճանի, կոչվում է Յելսիուսի ջերմաչափ (չվեդացի Յելսիուսի անունով): Յեթե բաժանված է 80° -ի, կոչվում է Ռեոմյուրի ջերմաչափ (Ֆրանսիացի Ռեոմյուրի անունով):

Նորհրդային Միության մեջ գիտության և բժշկության բնագավառում Յելսիուսի ջերմաչափն է ընդունված:

Մնդիկը -39 աստիճանում է սառչում և $+358$ աստիճանում յեռ է գալիս: Սպիրտը սնդիկից ավելի ուշ է սառչում: Դրա համար ել շատ ցուրտ տեղերում սնդիկի փոխարեն սպիրտ են գործածում, այսինքն՝ սպիրտային ջերմաչափ:

3. Ոգեռեվուրբաբանական ճեռի.—Ջերմաչափի միջոցով ողի ավելի ճիշտ ջերմաստիճանը վորոշելու համար հարկավոր է ջերմաչափը շատ մեծ խնամքով պաշտպանել կողմնակի աղղեցություններից, այն է՝ արևից, ամպերից, անձրևից, ձյունից, տաք և սառը մարմիններից և այլն: Փորձերը ցույց են տվել, վոր ջերմաչափը գետնից 2 մետր բարձր պետք է պահել: Նրա մոտ ողն ազատ պետք է հոսի ու չհավաքվի: Այս պահանջները բավարարելու համար ջերմաչափը պետք է պահել այնպիսի տնակի մեջ, վորի բարձրությունը գետնից 2 մետր է և ավելի՝ և ողն ազատ շարժվում է մեջն ու արևի ճառագայթները չեն կարող ներս ընկնել: Այս պահանջները կարող է բավարարել անզլիտական տիպի տնակը, վորի ընդհանուր տեսքը տրված է № 1 նրկարում:

Տնակի պատերը շինված են յերկու շաբք փայտե բարակ տախտակներից (փեղկերից): Տախտակները դասավորված են 45 աստիճան թեք—զրսի շաբքը դեպի դուրս, ներսի շաբքը՝ դեպի ներս այնպես, վոր ողն ազատ կերպով ներս է հոսում ու սիւնույն ժամանակ ջերմաչափը պաշտպանվում է արևի ճառա-

գայթներից, անձրևից, ձյունից և այլն: Հյուսիսային կողմի պատը ծառայում է նաև վորպես դուրս, վորը հողակապով ամրացված է հյուսիս-արևելյան ուղղահայաց ձողին:

Կտուրը բաղկացած է յերկու համաձայնակից: Ներքեի ծածկը հորիզոնական դիրք ունի, իսկ վերեիինը թեքված է դեպի հարավ: Վերին ծածկի տակ տաքացած ողը դեպի վեր անցնելու ազատ հոսանք ունի:




Նկ. 1 Մնդիկան տիպի տնակ

Հատակը յերեք տախտակից է շինված, վորոնցից միջինը ծայրի յերկու տախտակից ավելի բարձր է և այնպես է տեղավորված, վոր ներքեից յեկող տաք ճառագայթներից հատակը պաշտպանում է, առանց խանգարելու ողի հոսանքը:

Տնակը գրվում է հատուկ պատվանդանի վրա, վորը բուրգի ձև ունի: Տնակը պետք է անպայման ներկվի սպիտակ յուղաներկով կամ եմալի ներկով: Սպիտակ ներկը ճառագայթներն ավելի լավ է անդրադարձնում, ուրեմն քիչ է տաքանում:

4. Մթնոլորտն ու նրա նկունքը. — Մեր յերկրագունդը շրջապատված է ողով, վորը տարածվում է դեպի վեր: Յերկրագունդը շրջապատող ողն ամբողջութեամբ վերցրած կոչվում են մթնոլորտ, վորի բարձրութեանը հասնում է մոտ 800 կիլոմետրի:

Մի քառակուսի սանտիմետրի վրա գործ դրած ճնշումը հավասար է այդ մի քառակուսի սանտիմետրի վրա գտնված ողի սյան ջաշին: Սյունը վորքան բարձր է և ողը խիտ, ճնշումն այնքան մեծ է:



Նկ. 2. Անբրոիդ

Որինակ՝ վերցնենք իրար հավասար ողի յերկու սյուն. դրանցից ծանր կլինի այն սյունը, վորի ողը խիտ է, իսկ միևնույն խտութեան ունեցող ողից ծանր կլինի այն, վորի սյունը բարձր է:

Ողի ճնշման համար ամենքի կողմից ընդունված ու հարմար չափը սնդկասյունի բարձրութեանն է Այն գործիքը, վորի մի-

ջացով չափում են ողի (մթնոլորտի) ճնշումը, կոչվում է ծանրաչափ (բարոմետր): Ամենահասարակ ծանրաչափը Տորիչելլյան ծանրաչափն է. 1643 թվին իտալացի գիտնական Տորիչելլին հետևյալ փորձը կատարեց: Նա վերցրեց մի մետր յերկարութեան ունեցող աղակյա խողովակ, վորի մի ծայրը ծածկած էր (զոդված), իսկ մյուսը՝ բաց: Այդ խողովակը լիքը սնդիկ լցրեց, բաց ծայրը մատով պինդ ծածկեց և այդ բաց ծայրը գլեց սնդիկ լցրած մի լայն ամանի մեջ (ամանի միջի սնդիկի մակերեսն ազատ էր): Մտառ հանելով՝ խողովակի ծայրը բաց արեց և տեսավ, վոր խողովակի միջի սնդիկն իջնելով կանգնեց մի վորոշ բարձրութեան վրա՝ մոտ 76 սանտիմետր: Խողովակի մեջ սնդիկի վերևում ող չկա և խողովակի ծայրը ծածկված է, հետևապես խողովակի ներսից սնդիկի վրա ճնշում գործ չի դրվում, ամանի միջի սնդիկի մակերեսն ազատ է, դրսից սնդիկի վրա ճնշում է գործ դնում մթնոլորտը: Յեթե խողովակի մեջ սնդիկի սյան բարձրութեանը 76 սանտիմետր է, նշանակում է՝ 76 սանտիմետրը սնդիկի սյունը հավասարակշռել է նույն հաստութեան ունեցող մթնոլորտի սյան ճնշմանը:

Յեթե մթնոլորտային ճնշումը մեծանա, կմեծանա նաև սնդիկի սյան բարձրութեանը, և հակառակը:

Ողի ճնշումը պայմանավորվել են հաշվել սնդիկի սյան բարձրութեամբ՝ միլիմետրներով:

Բացի սնդիկի ծանրաչափից, կա նաև մետաղե ծանրաչափ, այսպես կոչված՝ անբրոիդ (տես նկ. 2): Սրա զգայուն մասը բողկացած է մետաղե, ծալքավոր մակերեսներ ունեցող անբրոիդային պատյանից, վորի միջից ողը հանված է: Այս պատճառով արտաքին ճնշումը ձգտում է ճնշել պատյանը, բայց դրսի ուժեղ զսպանակը սեղմում է այն: Պատյանի ձևափոխութեանը լծակների սիստեմի ու շղթայի միջոցով դիպչում է սլաքի առանցքին և սլաքը շարժվում է թվատախտակի վրայով: Թվատախտակի ցուցանակի բաժանումները սնդկասյունի կես միլիմետրին են համապատասխանում: Յերկար գծերի դեմ նշանակված թվերը միլիմետրների տասնյակներն են ցույց տալիս:

Չերմաստիճանը բարձրանալու ժամանակ զսպանակի առաձգականութեանը փոքր ինչ նվազում է. այս պատճառով, յեթե միևնույն ճնշման ժամանակ անբրոիդի Չերմաստիճանը փոխվում է, նրա սլաքի ցուցումներն էլ փոքր ինչ կփոխվեն: Կործիքի կարգավորման ժամանակ աշխատում են Չերմաստի-

ճանի ազդեցութիւնը հաշվեհատուցելով վերացնել, բայց և այնպէս ազդեցութեան մի մասը մնում է:

Յեղանակի փոփոխումը կախումունի նուշնպես ողբի ճնշման փոփոխումից, վորի մասին կխոսենք ներքեւում:

Յերկրագունդն արեւից անհավասարաչափ է տաքանում, մի տեղ շատ է տաքանում, իսկ մյուս տեղը՝ քիչ, այս պատճառով էլ յերկրագունդի վրա ողբի ճնշումը մի տեղ մեծ է, իսկ մի ուրիշ տեղ՝ փոքր: Ողբի ճնշումը պետք է չափել միևնուէյն բարձրութեան վրա: Պայմանավորված է ողբի ճնշումը հաշվել ծովի մակերևույթից: Հնարավոր չէ ծանրաչափերն այնպէս դնել, վոր բոլորը ծովի մակերևույթից միևնուէյն բարձրութեան վրա լինեն: Դրա համար բոլոր տեղերի ծանրաչափական ճնշումները բերում են ծովի մակերևույթին, այսինքն այն ճնշմանը, վոր ցույց կտար ծանրաչափը, յեթե այն տեղափոխելնք ծովի մակերևույթի վրա: Բնականով ծանրաչափի ճնշումը և նրա դրված տեղի բարձրութիւնը՝ կարելի չէ հաշվել այն ճնշումը, վորը ցույց կտար ծանրաչափը, յեթե այն իջեցրած լինելինք ծովի մակերևույթի վրա:

5. Մթնոլորտի տարածումը. ցիկլոն, անսիցիկլոն. — Մթնոլորտը յերբեք հանդիստ վիճակում չի լինում. քամի չեղած ժամանակ ողբ դարձյալ շարժվում է, բայց վոչ թե հորիզոնական ուղղութեամբ, այլ ներքևից վերև, կամ վերևից դեպի ներքև:

Ի՞նչ ուժ է, վոր ողբն ստիպում է գետնի յերեսից շարժվել: Քեանի վրա ողբ մի տեղից տեղափոխվում է մի ուրիշ տեղ այն պատճառով, վոր մի տեղ մթնոլորտային ճնշումը մեծ է, իսկ մյուս տեղ՝ փոքր: Ողբի տեղափոխման պատճառը ճնշումների տարբերութիւնն է: Մեծ ճնշումից ողբ տեղափոխվում է դեպի փոքր ճնշումը: Ուստի, վորպեսզի իմանանք, թե ողբ վորտեղից ուր է տեղափոխվելու, պետք է իմանանք, թե ճնշումը վորտեղ է մեծ, վորտեղ՝ փոքր:

Յեթե միևնուէյն ժամանակ չափենք տարբեր տեղերի մթնոլորտային ճնշումները, կտեսնենք, վոր մի տեղ ճնշումը մեծ է, իսկ մի քանիսում՝ փոքր: Ողբ կսկսի բարձր ճնշումից դեպի ցածր ճնշումը հոսել:


Շնորհիվ այն բանի, վոր յերկրագունդը պտտվում է, իսկ ողբն ամուր կապված չէ նրա հետ, վերջինս բարձր ճնշումից դեպի ցածր ճնշումն ուղիղ չի հոսի, այլ դեպի աջ կթեքվի:

Յեթե կանգնենք այնպէս, վոր ծոծրակներս դեպի քամին լինի, այդ ժամանակ ցածր ճնշումը կընկնի ձախ կողմերս, մի քիչ առաջ, իսկ բարձր ճնշումը՝ աջ կողմերս, մի քիչ հետև: Որինակ՝ յեթե քամին հարավից է փչում, և մենք այնպէս ենք կանգնել, վոր քամին փչում է մեր ծոծրակին, այն ժամանակ ցածր ճնշումը հյուսիս-արևմուտք կընկնի, իսկ բարձր ճնշումը՝ հարավ-արևելք:


Յեթե մի վորեւ տեղ ցածր ճնշում կա, և յեթե այդտեղից վոր կողմն էլ գնանք ճնշումը մեծանա, այդ դեպքում բոլոր կողմերից ողբ պետք է հոսի դեպի ցածր ճնշումը, այսինքն՝ դեպի կենտրոնը:

Քանի վոր ողբ բարձր ճնշումից ուղիղ դեպի ցածր ճնշումը չի հոսում, այլ մի քիչ դեպի աջ է թեքվում, դրա համար էլ ողբ կհոսի դեպի կենտրոնը վոչ թե ուղիղ, այլ մի քիչ թեք: Քամին կըրջապատի ցածր ճնշումը և կփչի ժամացույցի սլաքին հակառակ: Մթնոլորտի ճնշման դաշտի այն մասը, վորտեղ փեշերից դեպի կենտրոն ճնշումը փոքրանում է, և քամին ժամացույցի սլաքին հակառակ ուղղութեամբ է փչում, կոչվում է ցիկլոն (տես սինոպտիկական քարտեզ): Յեթե վորեւ տեղ ամենաբարձր ճնշում կա, և յեթե վոր կողմն էլ գնանք ճնշումը նվազում է, այդ դեպքում ողբ կհոսի կենտրոնից դեպի բոլոր կողմերը, թեքվելով քիչ աջ: Քամին կփչի ժամացույցի սլաքի ուղղութեամբ: Այնտեղ, վորտեղ քամին փչում է սլաքի ուղղութեամբ, բոլոր կողմերից դեպի կենտրոն ճնշումը մեծանում է և կենտրոնում կլինի ամենամեծ ճնշումը, մթնոլորտի ճնշման դաշտի այդ մասը կկոչվի անտիցիկլոն (տես սինոպտիկական քարտեզ):

6. Քամի. — Ողբ յերբեք հանդիստ վիճակում չի լինում, այլ միշտ շարժվում է: Ողբի շարժումը կոչվում է քամի: Յուրաքանչյուր քամի բնորոշվում է իր ուղղութեամբ և արագութեամբ: Քամու ուղղութիւնը վորոշվում է հորիզոնի այն կողմով, վորտեղից քամին է փչում: Հորիզոնը բաժանվում է 16 կողմի, վորոնցից 4-ը գլխավոր կողմերն են, 4-ը՝ յերկրորդական և 8-ը՝ յերրորդական: Գլխավոր կողմերն են. 1. հյուսիսը, 2. հարավը, 3. արևելքը, 4. արևմուտքը: Յերկրորդական կողմերն են. 1. հյուսիս-արևելքը, 2. հյուսիս-արևմուտքը՝ 3. հարավ-արևելքը, 4. հարավ-արևմուտքը: Յերրորդական կողմերն են՝ 1. հյուսիս-հյուսիս-արևելքը, 2. արևելք-հյուսիս-արևելքը, 3. արևելք-հարավ-



Նկ. Հողացույց.



Աշխարհի 16 կողմերը քամու ուղղությունը վերաբերյալ համար

արևելքը, 4. հարավ-հարավ-արևելքը, 5. հարավ-հարավ-արևմուտքը, 6. արևմուտ -հարավ-արևմուտքը, 7. արևմուտք-հյուսիս-արևմուտքը, 8. հյուսիս-հյուսիս-արևմուտքը:

Ընդհանրապես քամու արագութիւնը չափվում է մետրներով մեկ վայրկյանում: Փամիւնները լինում են տարբեր ուժերի—հանդարտ—հողմնացույցի շարժումն աննկատելի յե, թեթե—հողմնացույցն սկսվում է շարժվել, տերևները շարժվում են, թույլ—ծառի տերևները և բարակ ճյուղերը շարժվում են, չափավոր քամին փոշի յե բարձրացնում, դով—բարակ ծառերը շարժվում են, ուժեղ—ծառերը շարժվում են, հեռագրալարերը ձայն են հանում: Բացի դրանից, լինում են ավելի ուժեղ քամիներ: Փամու ուժն ու արագութիւնը վորոշվում են հողմնացույցի միջոցով:

7. Հողմնացույցի նկարագրությունը:—Վիւրի հողմնացույցը բաղկացած է քամու ուղղութիւնը և ուժը ցույց տվող մասերից: Այդ յերկու մասերն էլ ամրացված են a շարժական յերկաթյա խողովակի հետ, վոր հազցված է s պողպատյա առանցքի վրա, այնպես վոր a խողովակն էր բոլոր մասերով ազատ կարող է պտտվել s առանցքի շուրջը: a խողովակի ներքևի մասը, վոր հազցված է s առանցքի վրա, կառուցված է բավաւանին հաստ, վորպեսզի թեկուզ ուժեղ քամիների ժամանակ չջարդվի: s առանցքի ներքևի ծայրն ամրացված է փայտե սյունի ծայրին, իսկ վերին մասը գտնվում է a խողովակի հաստացրած մասի մեջ: s առանցքի վրա հանդցված է m աղույցը (այժրտ), վորի վրա ամրացված են յերկաթե 8 ձողիկ, վորոնցից 4 յերկարը ցույց են տալիս ալխարհի շրջավոր կողմերը, իսկ 4 կարճը՝ յերկրորդական կողմերը: Յերկար ձողերից մեկի վրա ամրացված է N տառը, վոր հյուսիսային ուղղութիւնն է ցույց տալիս:

a խողովակի հաստացրած մասի մի կողմից շինված են հողմնացուցիչի c յերկու թևը, իսկ մյուս կողմից հազցված է քամու ուղղութիւնն d ցուցիչը՝ հակակշռով: c թևերը հեշտութիւնամբ կանգնում են դեպի քամին և պտտում a խողովակն իր բոլոր մասերով: c թևերը շրջելով քամու ուղղութիւնամբ, e հակակշիւրը կանգնում է հակառակ քամու ուղղութիւն: Վերջինիս ուղղութիւնը համեմատելով ալխարհի կողմերը ցույց տվող ձողերի ուղղութիւնն հետ՝ կարելի յե վորոշել քամու ուղղութիւնը:

a խողովակի վերին ծայրին ամրացված է քամու ուժը ցուցիչը, վոր բաղկացած է i յերկաթյա ուղղանկյուն տախտակից և g ազդեցուցիչը, վորի վրա 8 ձողիկ կա: Տախտակը (i)

1226 37



պետք է ունենա 300 մմ յերկարություն, 150 մմ յայնություն և 200 գր ծանրութուն: Ի տարտակը վերևից ամրացված է յերկաթյա առանցքին, վորի յերկու ծայրի փոսերի մեջ ստնում են շրջանակին ամրացված KK պտուտակները: Տախտակն ազատորեն կարող է ճոճել. KK պտուտակների շուրջը: Քամին լը ուժի չափով ի տախտակը վեր է բարձրացնում:

Ը աղեղի վրայն ձողերով կարելի յե վորոշել, թե տախտակը վորքան է հեռաց ը ուղղաձիգ զրությունից:

Քամու ուղղության և արագության վրա մեծ ազդեցություն են թողնում առարկաները, ծառերը, շենքերը և այլն: Իրա համա եղ հողմնացույցն այնպիսի դիրք պետք է գրավի, վոր քամրն կարողանա ամեն կողմից ազդել վրան: Այս պատճառով հողմնացույցը բացակի՞ 8—10 մետր բարձրություն ունեցող սյան վրա պետք է դնել. այդ սյունը շրջակայքի առարկաներից բարձր պետք է լինի:


8. Քամու ուղղության ու արագությունը վորուելը.— Քամու ուղղությունը ցույց է տալիս ձ ցուցիչը, վոր, սովորաբար, վորոշակի միջին զրությունից այս ու այն կողմն է տատանվում, ուստի 1—2 րոպե պետք է հետևել նրան և գրի առնել քամու ուղղության ցուցիչի միջին դիրքը: Ութ զլխավոր ուղղությունների հաշվումը կատարվում է աշխարհի կողմերի 8 ցուցիչ-ձողերով: Յեթե ձ ցուցիչի միջին ուղղությունը մոտավորապես յերկու հարևան ձողիկների միջտեղն ընկնի, պետք է հաշվել համապատասխան յերրորդական ուղղությունը: Որինակ՝ յեթե ձ ցուցիչն ընկնի Նյուսիս-արևելք ընկնող ձողի ուղղությամբ, քամու ուղղությունը լինի Նյուսիս արևելք: Իսկ յեթե ցուցիչն միջին ուղղությունը կիլի մոտավորապես Նյուսիս-արևելք և արևելք ցույց տվող ձողերի միջև, այդ դեպքում քամու ուղղությունը կլինի արևելք-Նյուսիս-արևելք:

Վիղի հողմնացույցով քամու արագությունը ճշգրիտ վորոշելու համար անհրաժեշտ է 2 րոպե շարունակ դիտել տախտակի ճոճումները և նշանակել վերջինիս միջին դիրքը Ը ցուցաշեղի վրա յեղած այն ձողի կամ այն ձողերի համարներով, վորի մաս կամ վորոնց մեջ ձ ճումը կատարվի և ձողի, ի համարները նաշվում են վորից մեք: Որինակ՝ յեթե տախտ կը 3 րդ և 5-րդ ձողերի միջև է ճոճում, 4-րդ ձողը պետք է հաշվել Յեթե ճոճումը ժամանակ տախտակի միջին դիրքն ընկնի 4 րդ և 5-րդ ձողերի միջև, պետք է գրանցել 4—5: Յեթե թույլ քամու ժամանակ տախտակը հաղիվ է ճոճում, նշանակում է 0—1: Յեթե տախտակի միջին դիրքը ճոճումների ժամանակ 7-րդ ձողից բարձր է, պետք է նշանակել 67-ից բարձր:

Իմանալով տախտակի դիրքը Ը ցուցաշեղի վրա գտնված ձողերի նկատմամբ՝ հատուկ աղյուսակի միջոցով կարելի յե հաշվել քամու արագությունը:

9. Անեմոմետր.— Քամու արագությունը չափում են նաև անեմոմետրի միջոցով: Մի շարք անեմոմետրներ կան:

Փոստի անեմոմետրի վերին մասը բաղկացած է չորս կիսագնդից (նկ. 5), վորոնց մի կողմն ուռուցիկ է, իսկ մյուսը՝ գոգավոր: Կիսագնդերը դասավորված են այնպես, վոր բոլորի ուռուցիկ կողմերը մի կողմ են դարձված: Կիսագնդերը շատ անշնչան շփումով կարող են պտտվել առանցքի շուրջը: Քամու



Նկ. 5. Փոստի անեմոմետր

ճնշումը գոգավոր կողմերի վրա ավելի մեծ է, քան ուռուցիկ կողմերի, դրա համար եղ քամին վոր կողմից էլ լինի, կիսագնդերը կշարժվեն մեկույն ուղղությամբ՝ ուռուցիկ կողմերը միշտ դեպի առջ: Առանցքի ներքին մասն ատամնավոր հաղորդիչի միջոցով միացված է պտույտների հաշվեցուցչի հետ:

Պտույտների հաշվեցուցիչը հնարավորություն է տալիս հաշվելու, թե կիսագնդերը վորոշ ժամանակամիջոցում քանի պտույտ են կատարել, վորից հետո հատուկ աղյուսակի միջոցով վորոշվում է քամու արագությունը:

Գործիքներ կան, վոր ինքնուրույն կերպով ու անընդհատ
չբի յին առնում քամու ուղղութիւնն ու արագութիւնը: Այդ
գործիքները կոչվում են անեմոգրաֆ:

10. Արտիմ գոլորտներն ու ամպերի անոց գալը.— Չուրը յե-
րեք վիճակ ունի՝ պինդ (սառուց), հեղուկ (ջուր) և գազային
(գոլորչի): Ջրային գոլորչին գազ է, վոր մեծք չենք տեսնում, և
միայն այն ժամանակ ենք տեսնում, յերբ խտանում է (վեր և
ածվում ջրային մանր կաթիլների): Յիւր ողում մեծ քանակու-
թյամբ ջրի գոլորչի յե լինում, զգում ենք և ասում, ողը խոնավ
է (որինակ՝ բաղնիքում): Չուրը գոլորչի յե դառնում վոչ միայն
յեփելիս: Սառուցը մինչև անգամ ամենացուրտ ժամանակ գո-
լորչիանում է, իհարկե՝ շատ դանդաղ: Տաքացնելիս Չուրը շատ
արագ է գոլորչիանում, իսկ յերբ տաքացրած չէ, դանդաղ և գո-
լորչիանում:

Ամենաճիշտ գործիքների միջոցով գտել են, վոր 10⁰ բա-
րեխառնութիւն ունեցող մի խորանարդ մետր ողում կարող է
լինել ամենաշատը 9,5 գրամ անտեսանելի ջրային գոլորչի, 30⁰-ում
ամեն աշատը 30 գրամ գոլորչի, և այլն: Յեթե 30⁰ բարեխառնու-
թիւն ունեցող ողը, վորի մեջ 30 գրամ ջրային գոլորչի կա, սա-
ռեցնենք մինչև վոր բարեխառնութիւնը լինի 10⁰, այդ ժամա-
նակ կտեսնենք, վոր 20,5 գրամ ջրային գոլորչին կվերածվի
ջրային մանր կաթիլների, վորոնք կլողան ողի մեջ, վորովհետեւ
10⁰ բարեխառնութիւն ունեցող ողում կարող է լինել ամենա-
շատը 9,5 գրամ գոլորչի, այնինչ այդ ողում յեղել է 30 գրամ
գոլորչի (30—9,5=20,5): Այսպես, ուրեմն, ողի բարեխառնութիւ-
նը վորդան ցածր լինի, այնքան քիչ ջրային գոլորչի կպարունա-
կի: Ողի ջերմաստիճանը պակսելիս նրա մեջ յեղած ավելի
ջրային գոլորչին վեր է ածվում ջրային մանր կաթիլների: Տա-
քանալուց այդ կաթիլները նորից դառնում են գոլորչի:

Ողի մեջ միշտ էլ ջրային գոլորչի կա, վորը ծովերից, գե-
տերից, լճերից, խոնավ հողերից և այլ տեղերից ընկել և
ողի մեջ:

Ողը հաճախ ստիպված է լինում վեր բարձրանալ: Վերը մեծք
տեսանք, վոր ողը վեր բարձրանալիս նրա ջերմաստիճանը նվա-
զում է: Ինչպես ասացինք, գիտական հետազոտութիւնները
յուրեք են ավել, վոր ողը յուրաքանչյուր 100 մետր վեր բարձ-
րանալիս ջերմաստիճանը պակասում է 1-ով, յեթե այն հագե-
ցած չէ, այսինքն՝ յեթե նրա մեջ գտնված ջրային գոլորչին չի

վերածվել մանր ջրային կաթիլների: Յեթե ողը հագեցած է,
յուրաքանչյուր 100 մետր բարձրանալիս նրա բարեխառնու-
թիւնը պակասում է վոչ թե 1⁰ ով, այլ մոտ 0,6-ով, վորովհե-
տեւ գոլորչին ջրային կաթիլների վերածվելիս առ ջ է գալիս
վորոշ ջերմութիւն (թափված ջերմութիւն), վորը թույլ չի
աւելիս 1-ով պակսելու:

Շատ քիչ դեպքեր են լինում, յերբ ներքևում ողը հագե-
ցած է լինում: Վորպեսզի ողը հագենա, նրա մեջ յեղած
ջրային գոլորչին վերածվի ջրային մանր կաթիլների, հարկա-
վար է, վոր նա վորոշ բարձրութեան հասնի:

Որինակ, յեթե ներքևում ողը 25⁰ բարեխառնութիւն ունի և
յուրաքանչյուր խորանարդ մետրում պարունակում է 9,5 գրամ
ջրային գոլորչի, այն հագնելու համար հարկավոր է, վոր նրա
ջերմաստիճանը 10 լինի, այսինքն՝ 15-ով պակաս, վորի
համար անհրաժեշտ է, վոր նա 1500 մետր վեր բարձրանա. մեր
վերջրած ողը հագեցած կլինի 1500 մետր բարձրութեան վրա.
յեթե նա ավելի վեր բարձրանա, նրա ջերմաստիճանն ել ավելի կպակ-
սի, և միջի ջրային գոլորչին ավելի կլինի, վորը կվերածվի
ջրային մանր կաթիլների և ամպ կգոյացնի:

Յեթե ողը շատ սառն է, ջրային գոլորչին անմիջապէս կվեր-
ածվի սառցի շատ փոքր բյուրեղի:

Ինչպես ասացինք, ջրային գոլորչու խտացման ժամանակ
վորոշ քանակութեամբ ջերմութիւն է առաջ գալիս, ուստի և
ջրային գոլորչիներով հագեցած ողի բարեխառնութիւնն ավելի
դանդաղ է ընկնում, քան չոր ողինը:

11. Մթնոլորտային սեղումներ.— Ողում գտնված ջրային գո-
լորչիները վորոշ պայմաններից թափվում են գետին վորպես
տեղումներ: Մթնոլորտային տեղումները լինում են. ա) հեղուկ՝
անձրև, ցող, բ) պինդ տեղումներ՝ ձյուն, բանջարբուսիկ, կար-
կուտ, յեղյած և այլն:

Յերբ ողը գոլորչիներով հագնում է, այդ գոլորչիները
կարող են վերածվել ջրի կամ սառցի: Ողը հագնում է գլխա-
վորապէս ջերմաստիճանի նվազելուց:

Յերբ պարզ ու հանդիստ գիշեր է, ճառագայթումից գետի-
նը պաղում է: Ողը շփվելով սառը գետնի հետ՝ միջի ջրային
գոլորչիները խտանում են (ողը հագնում է): Յեթե ողի հա-
գեցումը 0-ից բարձր աստիճանում է առաջ գալիս, ջրային գո-
լորչիները խտանալով նստում են գետնի վրա վորպէս ցող, իսկ

յիթե 0 ից ցածր աստիճանում և առաջ գալիս, ջրային գոլորչի-
ները նստում են գետնի վրա վորպես յեղյամ:

Ողբ պարզելուց սնմիջապես հետո ջրային գոլորչիները
խտացումը շատ քիչ դեպքերում և հնարավոր: Մթնոլորտում
անհրաժեշտ են փոշու կամ այլ մասնիկներ, վոր ջրային գոլոր-
չիները վրան խտանան:

Ողի մեջ ջրային գոլորչիների խտացումից ամպեր են առաջ
գալիս: Յիթե խտացման պրոցեսը շարունակվի, ջրային կաթիլ-
ները կմեծանան և կթափվեն գետին վորպես անձրև:

Ջրային կաթիլները անմիջապես սառչելուց ձյուն և տե-
ղում: Յ.թե ջրային գոլորչիների գերստոնեցում և առաջ գալիս,
առցի բյւրեղների հետ շփվելով անմիջապես սառչում են և
թափվում վորպես կարկուտ:

12. Անձրևաչափի նկարագրությունը.— Մթնոլորտային տե-
ղումները դիտելիս վորոշում են նրանց տեսակը և քանակը: Տե-
ղումների քանակը վորոշվում և ջրաչերտի այն բարձրությամբ
արտահայտած միլիմետրներով, վոր գոյանում և գետնի հարթ
մակերեսի վրա տեղացած անձրևից կամ ձյունի, կարկաթի
և այլ բաների հալչելուց, առանց ծծվելու հողի մեջ, առանց
գոլորչիանալու և հոսելու ցածր տեղերը: Այն գործիքը, վորի
միջոցով տեղումները քանակը չափվում և, կոչվում և անձրևաչափ:

Անձրևաչափը բաղկացած և ցինկից շինած յերկու միանման
անձրևային անոթից (դուլյից) և բաժանումներ ունեցող ա-
պակյա չափաբաժակից (նկ. 6): Անձրևային անոթների համար
մի ընդհանուր ծածկոց (крышка) կա: Անոթի ներսում հավաք-
ված ջուրը գոլորչիանալուց պաշտպանելու համար վորիս յեզրին
23 սմ-ի վրա, կ ձագարած և սիջնապատ և կպցված: մի քանի
փոքրիկ անցքերով, վորոնց միջով ջուրը թափվում և անոթի
ներքևի մասը:

Միջնապատի տակ, անոթի կողքին մի փոքրիկ ճ խողովակ
և կպցված, վորը ծածկվում և e կափարիչով:

Ուժեղ քամու սամանակ անձրևի մանր կաթիլների կամ
ձյունի փաթիլի նվազ քանակն և ընկնում անձրևաչափի* մեջ, քան
իրականում նրանք տեղում են: Դրա համար ել թե տեղումներն
անձրևաչափի մեջ ընկնելն ապահովելու և թե նրա մեջ ընկած


* Անձրևաչափը բաղկացած և երկու դուլից, մեկ ծածկոցից, չափաբա-
ժակից, նիֆերի պաշտպանիչից և պատվանդանից:

ձյունի փաթիլները պահպանելու համար անձրևաչափը դիտում
և: Նիֆերի ձագարած և պաշտպանիչով:

Անձրևաչափը տեղակայելու համար այնպիսի տեղ պետք և
ընտրել, վոր անձրևաչափը ծածկերից, բարձր պարիսպներից այն-
քան հեռու լինի, վոր թեք տեղացող անձրևի կամ ձյունի
առաջը նրանք չկարողանան կտրել, և մոտակա ավելի բարձր
առարկաներից յամին նրա մեջ ձյուն չլցնի:

Անձրևաչափն ամրացվում և հատուկ սյունի վրա և այն-
պիսի բարձրությամբ, վոր վերևի յիզրը գետնի մակերևու թից
2 մետր բարձր լինի: Սյունի տրամագիծն անձրևաչափի տրա-
մագծից փոքր ինչ
ապակաս պետք և լինի
վորպեսզի նիֆերի
պաշտպանիչի և անձ-
րևաչափի անոթի
արանքն ընկած ձյու-
նը ներքևի անցքից
ազատորեն դուրս
թափվել կարողանա:

Անձրևաչափի վե-
րևի յեզրը հորիզո-
նական դիրք պետք և
ուսենա և նիֆերի
պաշտպանիչի վերևի
կտրվածքի հետ միև-
նույն բարձրության
վրա լինի:



Նկ 6. Անձրևաչափ

13. Մթնոլորտային
տեղումների չափը վորոշելը.— Այն ողկայանները, վորոնք
մետեորոլոգիկական ապակա, տեղումները չափում են որակա-
ն յեր-
կու անգամ՝ ժամի 7-ին և 19-ին իսկ անացած ողկայանները
որակա-
ն մի անգամ են չափում՝ ժամի 7-ին:

Նշված ժամկետներին անձրևաչափի անոթը ծածկոցով և
խողովակը կափարիչով ծածկելուց հետո սյունի վրայից
վերցնում և նրա տեղը մի ուրիշ դատարկ անոթ են դնում:
Սյունի վրայից վերցրած անձրևաչափի անոթը տանում են տե-
նյակ և մեջը հավաքված ջուրը ճ խողովակի միջով զգուշու-
թյամբ

գատարկում են Ե ապակյա չափաբաժակի մեջ: Վորովհետև անձ-
բնաչափի պատերին ջուր և կպչում, դրա համար ել անոթն
այնքան պետք է պահել չափաբաժակի վրա, մինչև վոր անոթից
այլևս ջուր չկաթի: Յեթե անոթի մեջ ձյուն կամ սառուց լինի,
պետք է սպասել, մինչև վոր հալվի: Հալվելու ժամանակ անձ-
բնաչափի անոթն անպայման պետք է ծածկված լինի ծածկոցով,
իսկ Վ խողովակը՝ Ե կափարիչով:

Յերբ տեղումներն ամբողջովին լցվում են ապակյա չափա-
բաժակի մեջ, վերջինս դնում են սեղանի հորիզոնական տախ-
տակի վրա և հաշվում, թե միջի ջուրը մինչև վոր բաժանումն է
հասնում, ըստ վորում դիտողի աչքը ջրի մակերեսի հետ միև-
նույն բարձրության վրա պետք է լինի: Հաշվումները կատար-
վում են բաժակի բաժանումներով: Անձրեաչափի չափաբաժակի
յուրաքանչյուր բաժանում համապատասխանում է անձրեա-
չափի անոթի մեջ յեղած ջրաշերտի մեկ տասնորդական մի-
լիմետր բարձրությանը: Ուրեմն, միլիմետրների վերածելու հա-
մար չափաբաժակի բաժանումների թիվը պետք է փոքրացնել 10
անգամ: 10 բաժանումին հավասար է 1 մմ, 5 բաժանումին՝
0,5 մմ և այլն:

14. Կայուն օդային զանգված.— Ողային զանգվածները կա-
րելի յե բաժանել կայուն և անկայուն զանգվածների: Ողային
զանգվածները մեզ մոտ գալիս են տարբեր տեղից: Մեզ մոտ
յերբեմն գալիս է հյուսիսի ցուրտ ու չոր ոգը, յերբեմն՝ հարա-
վային ծովերի խոնավ ոգը, յերբեմն էլ՝ հարավ-արևելքի տաք
ու չոր ոգը, և այլն:

Յերբ ողի տաք զանգվածը գալիս է մի վորևս սառը
մակերևույթի վրա՝ ներքեից սառչելով ջերմաստիճանն սկսում
է նվազել: Քանի վոր ոգը ջերմության վատ հաղորդիչ է,
այս պատճառով ել ջերմության նվազումը զանգաղ է տարած-
վում դեպի ավելի վերին շերտը, և ջերմաստիճանը յուրաքան-
չյուր 100 մետր բարձրության վրա նվազում է 0—3-ից մինչև
0,6⁰-ը՝ այսինքն՝ 0,6⁰-ից քիչ: Յերբեմն պատահում են շերտեր,
վորտեղ բարեխառնությունն ըստ բարձրության վոչ թե պակա-
սում է, այլ բարձրանում, կամ մնում է հաստատուն (ին-
վերսիա):

Դիցուք տաք ողային զանգվածը գալով սառը մա-
կերևույթի վրա ներքեից սառչելով՝ գետնի մոտի ջերմաստիճա-
նը լինում է 20⁰. յերբ մենք սավառնակով բարձրանանք վեր,
չափելով ողի ջերմությունը 100 մետր բարձրության վրա, կըս-
տանանք 19,7⁰, 200 մետր բարձրության վրա՝ 19,4⁰, 300 մետրի
վրա՝ 19,1⁰ և 400 մետրի վրա՝ 18,8⁰, այսինքն՝ յուրաքանչյուր
100 մետր բարձրության վրա ջերմաստիճանը պակասում է
0,3⁰-ով: Յենթադրենք, վոր ներքևում ինչ-ինչ պատճառով ողի
մի մասը տաքանալով 21⁰, թեթևանալով սկսեց վեր բարձրանալ՝
յուրաքանչյուր 100 մետր բարձրության վրա ջերմաստիճանը
պակասեց 0,6⁰-ով: 100 մետր բարձրության վրա նրա ջերմա-
տիճանը կլինի 20,4⁰, 200 մետրի վրա՝ 19,8⁰, 300 մետրի վրա
19,2⁰ և 400 մետրի վրա՝ 18,6⁰, բայց շրջապատի ողի ջերմաստի-
ճանը չափելուց 400 մետր բարձրության վրա ստացանք 18,8⁰,
հետևապես՝ բարձրացած ողը կիսի սառը և ծանր, քան շրջա-
պատի ողը, վորի պատճառով ստիպված կլինի նորից ներքև իջ-
նել, մինչև վոր նրա ջերմաստիճանը հավասարվի շրջապատի ողի
ջերմաստիճանին:

Մենք տեսանք, վոր ջրային գոլորշիներով հագեցած ոգը
վեր բարձրանալու ժամանակ յուրաքանչյուր 100 մետր բարձ-
րության վրա ջերմաստիճանը 0,6⁰-ով նվազում է:

Վերոհիշյալից յերևում է, վոր հագեցած ողը չի կարող շատ
վեր բարձրանալ, յեթե շրջապատի ողի ջերմաստիճանը յուրա-
քանչյուր 100 մետր բարձրության վրա 0,6⁰-ից քիչ է նվազում:
Այսպիսի դեպքում դեպի վեր չի կարող հոսանք առաջ գալ:

Այս բոլորից հետո կարողենք հետևյալ յեղրակացությունը
գալ. կայուն է կոչվում ողային այն զանգվածը, 1. վորն իր տե-
ղափոխության ժամանակ ավելի տաք է, քան մակե-
րևույթը, վորի վրայով հոսում է ինքը. 2. վորում յուրաքան-
չյուր 100 մետր բարձրության վրա ջերմաստիճանը պակասում
է 0,6⁰-ից պակաս, այսինքն՝ յերբ դեպի վեր բարեխառնությու-
նը զանգաղ է նվազում և 3. վորում դեպի վեր հոսանք առաջ
չի գալիս:

Բացի դրանից, կայուն ողային զանգված կարող է առաջ
գալ նաև ցուրտ ժամանակ, գիշերը: Յեթե լինում է պարզ և
հանգիստ գիշեր, գետինը ճառագայթոմից արագ սառչում է,
դեպի մոտ գտնված ոգը նույնպես սառչում է:

Դեպի վեր բարեխառնութիւնը նվազում է դանդաղ, այսինքն՝ յուրաքանչյուր 100 մետր բարձրութեան վրա ջերմաստիճանը 0,6°-ից քիչ է նվազում: Դեպի վեր հոսանքը դադարում է:

Յերբ տաք ողը տեղափոխվում է սառը մակերևույթի վրա ներքինից ստեղծվում է նրա մեջ գտնված ջրային գոլորչին խտանում է և առաջ են գալիս մառախուղ կամ շերտավոր ամպեր (St), տեղում է մաղող անձիւ, իսկ ինվերսիայի մակերևույթի վրա առաջ են գալիս ալիքային ամպեր՝ բարձր կույտային (AlCu) և շերտակույտավոր (StCu) ամպեր:

Այսպես ուրեմն կայուն ողային զանգվածում առաջ են գալիս մառախուղ, շերտավոր ամպեր (St), յերբեմն բարձր-կույտային (AlCu), շերտա-կույտային (StCu) ամպեր և մաղող անձիւներ են տեղում:

15. Անկայուն ողային զանգված.— Ինչպես ասացինք, մեզ մոտ տարբեր տեղերից տարբեր բարեխառնութիւն ունեցող ողային զանգվածներ են գալիս:

Յերբ ցուրտ ողային զանգվածն իրեն տեղափոխութեան ժամանակ իրենից տաք մակերևույթի վրա հոսի, ներքինից կտարանա, իսկ վերևում կմնա ավելի ցուրտ: Այս պատճառով ողի ջերմիտիճանն ըստ բարձրութեան արագ կնվազի, այսինքն՝ յուրաքանչյուր 100 մետր բարձրութեան վրա ջերմաստիճանը կնվազի 0,8°-ից մինչև 1° և ավելի:

Յենթադրենք, թե հիմա ցուրտ ողը գալով տաք մակերևույթի վրա ներքինի շերտը տաքանալով՝ գետնի մոտ ջերմաստիճանը հասավ 20°-ի, 100 մետր բարձրութեան վրա չափելուց ստացանք 19°, 200 մետրի վրա՝ 18°, 300 մետրի վրա՝ 17°, 400 մետրի վրա՝ 16°, և այլն, այսինքն՝ յուրաքանչյուր 100 մետր բարձրութեան ջերմաստիճանը կնվազի 1°-ով:

Ասենք թե ներքևում ողի մի մասը տաքանալով՝ ջերմաստիճանը բարձրացավ մինչև 21°-ի և այդ մասն ավելի թեթև լինելով, քան շրջապատի 20° ունեցող ողը, կբարձրանա վեր և յուրաքանչյուր 100 մետր բարձրութեան վրա ջերմաստիճանը կնվազի 0,6°-ով, այսինքն՝ ավելի քիչ, քան շրջապատի ողի ջերմաստիճանն է նվազում (1°): 100 մետր բարձրութեան վրա նրա ջերմաստիճանը կլինի 20,4°, 200 մետրի վրա՝ 19,8°, 300 մետրի վրա՝ 19,2°, 500 մետրի վրա՝ 18,0° և այլն: Պարզ յերևում է, զոր վորքան էլ այն վեր բարձրանա, միշտ կմնա տաք, հետևապես և թեթև, քան շրջապատի ողը, դրա համար էլ նա շատ վեր

ըն կբարձրանա: Այսպիսի ողային զանգվածը կոչվում է անկայուն ողային զանգված, այսինքն՝ այն ողային զանգվածը, վորք սովորական ժամանակ ավելի ցուրտ կլինի, քան այն մակերևույթը, վորի վրայով ինքն է հոսում, նրա ջերմաստիճանն է նվազումը յուրաքանչյուր 100 մետր բարձրութեան վրա կլինի 0,4°-ից բարձր և դեպի վեր հոսանք առաջ կգա, վորք կկոչվի անկայուն զանգված: Անկայուն ողային զանգված կտրոջ է առաջ գալ նաև տաք ժամանակ: Ամառը՝ ցերեկը, յերբ դեպի վեր սաստիկ տաքանում է, իր մոտ գտնված ողը նույնպես սաստիկ տաքանում է, դեպի վեր բարեխառնութիւնը նվազում է, այսինքն՝ յուրաքանչյուր 100 մետր բարձրութեան վրա ողի բարեխառնութիւնը նվազում է 0,6°-ից ավելի, դեպի վեր հոսանք է առաջ գալիս:

Ջերմաստիճանի այսպիսի դասավորումն ըստ բարձրութեան բարենպաստ պայմաններ է ստեղծում ողի տաքութեան և խոնավութեան դեպի վեր տեղափոխվելու համար: Թոնավ ողը վեր բարձրանալով՝ նրա մեջ գտնվող գոլորչին ցրտից շարունակ վեր կածվի ջրի մանր կաթիլներ, վորոնցից կգոյանան կույտավոր (Cu) հաստ ամպեր և կույտա-անձրևային (Cunb) ամպեր: Այդ մանր կաթիլները միանալով կկազմեն մեծ կաթիլներ: Այդ ամպերից կտեղան ուժեղ, մեծ կաթիլներ ունեցող՝ ամպրոպային բնույթ կրող հորդ անձրևներ:

Այն կայուն զանգվածը սարբերի և լեռների վրա բարձրանալով և տեղազրական դիմադրութիւնների հանդիպելով ուժեղանում է:

16. Արկտիկական ող.— Ողային զանգվածներն իրենց ծագումով կարելի յե բաժանել նաև 3 տիպի՝ արկտիկական, բևեռային և տրոպիկական:

Արկտիկական ողն առաջ է գալիս արկտիկական ավազանում և Հայաստան գալով առաջ է բերում ցրտեր, զարնան և աշնան գիշերները՝ ցրտահարութիւններ: Ամառը նա մեզ մոտ չի գալիս, զարնանը և աշնանը միայն գալիս է ցուրտ ֆրոնտից հետո: Յթե յերկինքը պարզ է, պետք է գիշերները ցրտահարութիւն սպասել, իսկ ցերեկները՝ ցուրտ յեղանակ:

Արկտիկական ողը շատ պարզ է, շատ քիչ փոշի յե պարունակում, առարկաները շատ հեռվից են յերևում և քիչ քանակութեամբ գոլորչի յե պարունակում: Գարնանն ու աշնանն անցնելով տաք գետնի վրայով՝ ցերեկը ներքինից տաքանալով բարձրանում է վեր, վորտեղ նրա մեջ գտնված գոլորչին ցրտից

խտանում է, և առաջ են գալիս կուլյտավոր ամպեր (Cu), վորոնք յերբեմն կփոխվեն ամպրոպային ամպերի. գարնանը, աշնանն ու ամառը լինում են նաև ամպրոպաներ: Գիշերները, գետինը ցրտե իս, դեպի վեր հոսանքը դադարում է, ամպերն անհետանում են ու պարզ և լինում:

Արկտիկական ողի հատկությունները՝

1. Ամբողջ շերտում ցածր բարեխառնություն
2. դեպի վեր ողի բարեխառնությունը գանգաղ է նվազում.
3. բացարձակ խոնավությունը քիչ է.
4. անսողուն լավ է.

Յերբեկներն այն ավելի տաքանալով՝ ձեռք է բերում անկայուն գանգավածի բոլոր հատկությունները:

Չմեռն արկտիկական ողի գալով Հայաստան՝ ներքևի շերտի շերմաստիճանը կարող է ավելի նվազել և կայուն գանգավածի հատկություններ ստանալ: Չմեռը գալով Հայաստան՝ յերբեմն առաջ է բերում սաստիկ ցրտեր:

Յերբ արկտիկական ողուն ենք գտնվում, և յեթե մթնադառային ճնշումը դանդաղ կերպով է բարձրանում և տաք Ֆրոնտի մոտեցման հատկանիշներ չկան, մոտակա յերկու որն ամենայն հավանականությամբ պետք է սպասել պարզ, շատ ցուրտ յեղանակ: Յերբեմն շատ ցրտելուց շերտավոր ամպեր կարող են առաջ գալ:

17. Բեվեռային ող.— Բեևռային ողը ձևակերպվում է բարեխառն գոտում: Կարելի յե տարրերը յերկու տիպի բեևռային ող. 1. ծովային և 2. ցամաքային:

1. ԳՈՎԱ-ԲԵՎԵՐԱՅԻՆ ՈՂ

Մովա-բեևռային ողն առաջ է գալիս հյուսիսային ատլանտիկայում և մեղ մոտ գալիս է հյուսիս-արևմուտքից կամ արևմուտքից: Իր մեջ մեծ քանակությամբ խոնավություն է պարունակում, բայց ճանապարհին լեռների հանդիպելով առաջ է գալիս կոնդենսացիա և Հայաստան է գալիս համեմատաբար քիչ քանակությամբ գոլորշիով:

Նրա ներքևի շերտերը տաք են, իսկ վերին շերտերը՝ ցուրտ: Ամառը տեղափոխվելով տաք ցամաքի վրայով՝ ներքևի շերտերն էլ ավելի յեն տաքանում և մեղ մոտ գալիս է վորպես անկայուն ող: Գալով տաք գետնի վրա՝ ներքևից տաքանում է, առաջ է գալիս դեպի վեր հոսանք, վեր բարձրանալով նրա մեջ գտնված գոլորշին խտանում է և գոյանում են կուլյտավոր (Cu) ամպեր,

վորոնք հաճախ փոխվում են կուլյտա-անձրևային ամպերի (Cunb), մանավանդ ցերեկները, յերբ արևն ալե ի յե տաքացնում գետինը, իսկ գիշերը ճառագայթումից գետինը պաղում է, դեպի վեր հոսանքը դադարում է և ամպերն անհետանում են: Այդ պատճառով էլ գիշերները լինում են պարզ և հով, իսկ կեսօրին առաջ են գալիս կուլյտավոր (Cu) և կուլյտա-անձրևային (Cunb) ամպեր, իսկ յերբեմն էլ յերեկոները տեղում են ամպրոպային բնույթ կրող ու կարճատև հորդ անձրևներ: Յեթե բարոմետրը ցած ճնշում ցույց տա և կուլյտավոր ամպերն առավուտը շուտ առաջ գան, այդ դեպքում ցերեկը (ավելի շուտ՝ յերեկոյան) կարելի յե ամպրոպային բնույթ կրող անձրև սպասել:

Չմեռը ծովա-բեևռային ողը տաք ծովերի վրայով գալով ձյունով ծածկված սառը ցամաքի վրա՝ ներքևից սառչում է (Ջերմաստիճանը նվազում է), իսկ վերևում մնում է ավելի տաք քան ներքևի շերտերը, և մեղ մոտ գալիս է վորպես կայուն ող: Չմեռը ծովա-բեևռային ողում հաճախ լինում են ներքևի շերտավոր ամպեր (St), յերբեմն շերտա-կուլյտավոր ամպեր (StCu), իսկ յերբեմն էլ մառախուղ:

Յեթե մթնոլորտային ճնշումը չի բնկնում և քամին իբուղուկությունը չի փոխում, այդ դեպքում ամպամած մեղմ յեղանակը կչարունակվի մի քանի սր ևս: Յերբեմն ծովա-բեևռային ողն այնքան տաք է լինում, վոր մեղ մոտ քիչ տաքանում է:

2. ԳՍՄԱՔԱ-ԲԵՎԵՐԱՅԻՆ ՈՂ

Ցամաքա-բեևռային ողը հաճախ ձևակերպվում է ՄՍՀՄ տերիտորիայում, իսկ յերբեմն էլ՝ Կենտրոնական Յեվրոպայում: Ամառը, յերբ մեղ մոտ ցամաքա-բեևռային ողն է գալիս, շատ շոգ է լինում: Ընդհանրապես բարոմետրը բարձր ճնշում է ցույց տալիս: Յերբեկները ներքևից տաքանալով՝ դեպի վեր հոսանք է առաջ գալիս, քիչ քանակությամբ լավ յեղանակի կուլյտավոր ամպեր են գոյանում, վորոնք կեսօրից հետո կարող են աճել ու փերածվել ամպրոպային ամպերի և սալ տեղական անձրևներ: Յերբեկներն առաջ են գալիս կուլյտավոր (Cu) կուլյտա-անձրևային (Cunb), բարձր կուլյտավոր (AlCu) և բարձր շերտավոր (AlSt) ամպեր, կեսօրից հետո հաճախ ուժեղ քամիներ են բարձրանում, վորոնք փչում են հյուսիսից և հյուսիս-արևելքից (Յեքան): Յերբեմն ուշ յերեկոյան կարճատև ամպրոպային բնույթ կրող անձրևներ են տեղում, իսկ գիշերները դեպի վեր հոսանքը

դադարելով ամպերն անհետանում են, և քամին դադարում է: Ամառ մեծ մասամբ պարզ գիշերներ են լինում: Յեթե մթնոլորտային ճնշումը դանդաղ կելուով բարձրանա և ուղիղ օրական ընթացք ունենա, գիշերները քամին մեղմ կամ բոլորովին հանգիստ լինի, իսկ ճաշից հետո ուժեղանա, յերկիջում ֆրոնտի մոտեցման հատկանիշներ չլինեն, այդ դեպքում մի քանի օր շոգ, չորախն յեղանակ պետք է սպասել Այդպիսի դեպք յիզով Հայաստանում 33 թ. հուլիս ամսին. հուլիս ամսի 1-ին կեսօրին Հայաստանը բռնել էր ցամաքա-րևեալային ողը: Սթնոլորտային ճնշումը դանդաղ կելուով բարձրանում էր և նորմալ որական ընթացք ունեւր Գիշերները յիզի են մեղմ կամ հանգիստ. իսկ ճաշից հետո քամիներն ուժեղացել են և փչել հյուսիսից կամ հյուսիս-արևելքից, այդ ժամանակ Հայաստանում հաստատված էր անտիցիկլոնային տիպի յեղանակը: Գիշերները մեծ մասամբ յեզի են պարզ և հանգիստ, իսկ ցերեկները՝ շոգ. առաջ են յեկել կուլտավոր, կուլտա-անձրևային և վերին կուլտավոր ամպեր, վորոնք յերբեմն տեղ տեղ տվել են շատ կարճատև անձրև:

Ձմեռը ցամաքա-րևեալային ողում ընդհանրապես մթնոլորտային ճնշումը քիչ է փոփոխվում, ցերեկը մի քիչ ընկնում է և գիշերը մի քիչ բարձրանում:

Ձմեռն այդ ողի ներքեի շերտը շատ սառն է լինում և լինում են դեպքեր, վոր ավելի սառն է լինում, քան թարմ արկտիկական ողը, իսկ վերին շերտերը կարող են ավելի տաք մնալ Դրա համար ել այն շատ կայուն ող է, ունենում է ուժեղ ինվերսիա և մառախուղ, վորը մեծ ասարածություն է բռնում Ձմեռը մեծ մասամբ այդ տիպի յեղանակները լինում են Հայաստանի կենտրոնական և հյուսիս-արևմտյան շրջաններում. այնտեղ կամ շերտավոր ամպեր են լինում կամ բոլորովին չեն լինում:

Յորբեմն ինվերսիայի մակերևույթի վրա նկատվում են ալիքային ամպեր: Յեթե վերին շերտերում բավականաչ փ ջրային գոլորշի յե լինում, այդ ժամանակ յերկիրքը ծածկված է լինում շերտավոր (St) ամպերով, իսկ յեթե ջրային գոլորշու քանակը յիչ է, պարզ և շատ ցուրտ յեղանակ է լինում:

Սեղ մոտ յերբեմն թե արկտիկական և թե ցամաքա-րևեալային ողում յերկար ժամանակ շատ ցուրտ յեղանակ (սառնամանիք) է լինում:

18. Տրոպիկական ող. — Տրոպիկական ողը մեղ մոտ է գալիս գլխավորապես հարավից, հարավ-արևելքից (Սև ծովից և Տանկաստանից) և բերում է բարձր (Չորմաստիճան) բարեխառնության շոգեր: Տրոպիկական ողը մեծ քանակությամբ փոշի յե պարունակում, վորը նրան պղտոր գույն է տալիս: Ողը լինում է մթապնած:

Յեթե տրոպիկական ողը չոր է, այդ դեպքում մեղ մոտ մի քանի օր շարունակ թե գիշերը և թե ցերեկը շոգ կլինի, մեծ մասամբ ել՝ չորային յիզանակ:

Ամառը մեղ մոտ, յերբ գետինը սաստիկ տաքանում է, արոպիկական ողը ներքևից տաքանում և դեպի վեր հոսանք է առաջ գալիս: Վեր բարձրանալիս միջի ջրային գոլորշին վեր է անվում ջրային մանր կաթիլների, վրբից կուլտավոր (Cu) ամպեր, կուլտա-անձրևային (Cunb) և բարձր կուլտավոր (AlCu) ամպեր են դոյանում, յերբեմն ել կարճատև անձրևներ են գալիս:


Գիշերները յերբ գետինը ցրտում է, դեպի վեր հոսանքը դադարում է և ամպերն անհետանում են: Այս է պատճառը, վոր շոգ օրերը յերեկոյան յերկիրքն ամպերով է պատվում, իսկ գիշերները պարզ են լինում:

Տրոպիկական ողը ձմեռը մեղ մոտ շատ հազվադեպ է գալիս: Քանի վոր ձմեռն այն ավելի տաք է, քան գետինը, վորի վրայով հոսում է, դրա համար ել մեղ մոտ գալիս է վորպես կայուն ող և իրեն հետ տաքություն է բերում: Տրոպիկական ողը կայուն է լինում նաև գարնանն ու աշնանը. այդ ողի մեջ առաջ են գալիս մառախուղներ, շերտավոր ամպեր և տեղում են մազող անձրևներ:

Ձմեռը, յերբ տրոպիկական ողը մեղ մոտ է գալիս, ներքևից սաստիկ սառելով առաջ են գալիս ուժեղ մառախուղներ, շերտավոր ամպեր և տեղում են մազող անձրևներ: Յեթե ցուրտ ֆրոնտի մոտեցման հատկանիշներ չկան, մանավանդ, յերբ բարձրորդ բարձր ճնշում է ցույց տալիս, կարելի յե սպասել, վոր նույն յեղանակը կշարունակվի նաև մյուս օրը: Յիրբ բարձրորդ ընկնում է, պետք է սպասել ցուրտ ֆրոնտի մոտեցում: Այդ դեպքում տաք յեղանակը յերկար չի մնա:

19. Ֆրոնտներ (նակասներ). — Ողային դանդաղաներն ընդհանրապես բաժանվում են անցողակի գոնայով, վորը հորիզոնական ուղղությամբ ունենում է մի քանի տասնյակ կիլոմետր

յայնություն: Ողային զանգվածների միջև յեղած սահմանը գործը չափով թեքված և դեպի ցուրտ ողը (տես նկ. 7): Յերկու տարբեր ողային զանգվածները միջև յեղած սահմանը կոչվում է ֆրոնտ: Տաք և ցուրտ ողը, վորոնց միջով անցնում է ֆրոնտը, միշտ շարժման մեջ է գտնվում: Ֆրոնտները լինում են տաք և ցուրտ:



ՏԱՔ ՅՐՈՆՏ

Յեթև տաք ողը հոսում է ցուրտ ողի վրա. իսկ ցուրտ ողը նետ է նահանջում, այդ ժամանակ ֆրոնտը կոչվում տաք ֆրոնտ:

Տաք ողը հոսելով ցուրտ ողի վրա՝ յերբեմն հոսնում է մինչև 10 կիլոմետր բարձրության, այնտեղ խիստ պաղում է, և առաջ են գալիս փետրավոր ամպեր (Ci): Փետրավոր ամպերից ներքև

ՏԱՔ ՈՐ:



առաջ են գալիս փետրաշերտավոր ամպեր (CiSt), վոր ընդհանրապես ծածկում են ամբողջ յերկինքը. բայց արեն ու լուսինը նրանց յետևից յերևում են: Սրանցից ներքև առաջ են գալիս բարձր շերտավոր ամպեր (AlSt), վոր բաղկացած են ջրի մանր կաթիլներից կամ ձյան աստղերից: Ավելի ներքև գտնվում են անձրևա շերտավոր ամպերը (NbSt), սրանցից տեղում են ամպային անձրևներ կամ ձյուն: Վերջապես,՝ ավելի ներքև՝ ցուրտ ողում առաջ են գալիս կարտրված շերտավոր ամպեր: Սրանցից անձրև չի գալիս: Տաք ֆրոնտն անցնելուց հետո մթնոլորտային տեղումները դադարում են: Յերկինքը յերբեմն սկսում է պարզել կամ ծածկված է մնում ներքևի շերտավոր ամպերով. կարող են տեղալ մաղող անձրևներ, իսկ ներքևում կարող են առաջ գալ մառախուղներ. այդ կախված է նրանից, թե ինչպիսի տաք ող է գալիս մեզ մոտ: Մթնոլորտային տեղումները բռնում են մինչև 300 կիլոմետր տարածություն:

Տաք ֆրոնտն անցնելու հետ միասին մթնոլորտային ճնշումը մեծ մասամբ ընկնում է. քամին նույնպես իր ուղղությունը փոխում է:

ՅՈՒՐՏ ՅՐՈՆՏ

Յերբ ցուրտ ողը հարձակվում է իսկ տաք ողը նահանջում կոչվում է ցուրտ ֆրոնտ: Յուրտ ողը տաք ողից արագ է շարժվում, ավելի ծանր է և խիտ, դրա համար ել հոսում է տաք ողի տակ: և վեր բարձրացնում: Տաք ողը բարձրանալով վերև, մեջը յեղած ջրի գոլորշին ցրտից խտանում է, վորից ամպեր են գոյանում:

Յուրտ ողը վերևում արագ է շարժվում քան ներքևում, քանի վոր ներքևում գետնի շփումը դիմադրություն է ցույց տալիս և ընթացքը դանդաղեցնում:

Իրա համար ել ցուրտ ողը տաք ողի տակ՝ վոչ թե տուր սեպի ձևով է մտնում, այլ մի քիչ կլորված դեպի ներքև:

Յուրտ ֆրոնտի առջև տաք ողն արագ բարձրանում է վերև, վորի պատճառով ֆրոնտի առաջ կույտավոր և բարձր կույտավոր ամպեր են գոյանում: Նրանց գոյանալուց հետո առաջ են գալիս կույտա-անձրևային ամպեր: Այդ ամպերն ամբողջ յերկինքն արագ կերպով ծածկում ու կարճատև, բայց ուժեղ անձրև կամ ձյուն են տալիս:

Ամառը հաճախ ամպրոպներ են լինում: Յուրտ ֆրոնտի առջև հաճախակի նկատվում են փետրակույտավոր (CiCu), բարձր կույտավոր (AlCu) ու շերտա-կույտավոր (StCu) ամպեր:

Յուրտ ֆրոնտն անցնելուց հետո անձրևը համարյա հանկարծակի կտրվում է, յերկինքը պարզում և բավականին ուժեղ ցրտում է:

Յուրտ ֆրոնտը մոտենալուց առաջ մթնոլորտային ճնշումն արագ կերպով ընկնում է, իսկ անցնելուց հետո արագ կերպով մեծանում է, վորովհետև տաք ողին հաջորդում է ցուրտ ողը. քամին իր ուղղությունն զգալի չափով փոխում է և հաճախ ուժեղանում:

20. Յեղանակը ցիկլոնում և անթիցիկլոնում --- Ցիկլոնը թե մեծ տարածություն է բռնում և թե իր տեղափոխման ժամանակ մեծ տարածություն է անցնում:

Այնտեղ, վորտեղից ցիկլոնն է անցնում, յեղանակը պետք է խիստ փոփոխվի: Մթնոլորտային տեղումները տաք ֆրոնտի առջև մեծ տարածություն են բռնում, իսկ ցուրտ ֆրոնտում՝ քիչ տարածություն:

Մինչև տաք ֆրոնտը մեզ մոտ հասնելը, յերկինքում փետրավոր ամպեր են յերևում, ապա փետրա-շերտավոր, հետո՝ բարձր-

չերտավոր ամպեր, վորից հետո մթնալորտային տեղումներ են լինում: Յիկլոնի տարբեր մասերում յեղանակը տարբեր է:

Յեթե ցիկլոնը բաժանելու լինենք 4 մասի, յուրաքանչյուրն իր առանձնահատկութունները կունենա. բոլոր ցիկլոնների արևելյան մասում հարավային և հարավ-արևելյան քամիներ են լինում, արևմտյան մասում՝ հյուսիսային և հյուսիս-արևմտյան քամիներ: Արևելյան մասը տաք է քան կենտրոնը, իսկ արևմտյան մասը ցուրտ է քան կենտրոնը: Յիկլոնի աջակողմյան առաջին մասում ընդհանրապես տաք քամիներ են փչում (հարավային, հարավ-արևմտյան կամ հարավ-արևելյան), վորոնք ցիկլոնի ճանապարհին խոնավ և տաք ոգ կրերեն: Հետևապես, դեպի վեր կլինեն հոսանքներ և համատարած անձրևային ամպեր, վորոնք դասավորված կլինեն վոչ թե կենտրոնում, այլ կենտրոնից առաջ և թեքված դեպի աջ:

Նրա շուրջը, ավելի շուտ՝ նրա առջևը լայն տարածության վրա անձրև չի լինի, բայց յերկնքում տարածված կլինեն բարձր շերտավոր և փետրա-շերտավոր ամպեր: Յիկլոնի կենտրոնի առաջ, ավելի հեռու, արագ կշարժվեն բարձր փետրավոր ամպեր:

Յիկլոնի ճախակողմյան առջևի մասը մի քիչ ցուրտ է, քան աջակողմյան մասը: Քամիները թույլ են և ցիկլոնին համարյա ուղղահայաց կփչեն: Յերկինքն ամպամած է, անձրևները՝ ընդհանրապես կարճատև:

Յիկլոնի կենտրոնը համեմատաբար հանդարտ է լինում, ուժեղ անձրևը հաճախ միանգամից դադարում է, ամպերը ցրվում են, և յերբեմն մի քանի ժամով յերկինքը պարզում է:

Յիկլոնի հետևի մասում (3-րդ և 4-րդ մասերում) մշտապես փչում են ուժեղ ընդհարումներ ունեցող (порывистые) քամիներ, զլխավորապես հյուսիսից և հյուսիս-արևմուտքից: Նրանք արագ կերպով քշում են կտրված կույտավոր ամպերը, վորոնցից հաճախակի տեղում են կարճատև, բայց ուժեղ անձրևներ:

Չմեռն անձրևի փոխարեն ձյուն է տեղում:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր ցիկլոնի ժամանակ ամպերի թիֆն ավելանում է, մթնոլորտային տեղումներ են լինում, քամիներն ուժեղանում են, մի խոսքով՝ յեղանակը վատանում է:

Հիմա տեսնենք, թե ինչպիսի յեղանակ է լինում անտիցիկլոնում: Շատ դեպքերում անտիցիկլոնում (առանձնապես կենտրոնում) լինում է պարզ և չորային յեղանակ: Միայն ձմեռը, յերբ ոգը ներքևում շատ սառն է, իսկ վերևում՝ տաք, անտիցիկլոնում կարող են լինել շերտավոր ամպեր կամ մառախուղ:

Անտիցիկլոնում քամին փչում է ժամացույցի սլաքի ուղղությամբ, և միևնույն ժամանակ ողբ կենտրոնից դեպի դուրս է հոսում: Յեթե անտիցիկլոնի կենտրոնն անցնում է վոչ թե դիտման տեղից, այլ նրա հարավային կողմից, այդ ժամանակ սկզբում հյուսիս-արևմտյան, հետո արևմտյան և, վերջապես, հարավ-արևմտյան քամի կփչի:

Յեթե անտիցիկլոնը տեղափոխվում է դիտման տեղի հյուսիսային կողմից, արևմուտքից դեպի արևելք, այդ ժամանակ սկզբում հյուսիսային, հետո հյուսիս-արևելյան, արևելյան և, վերջապես, հարավ-արևմտյան քամի կփչի:

Անտիցիկլոնը յնրբեմն մեծ տարածություն է բանում, և ամբողջ տերիտորիայում չորային ու մեծ մասամբ պարզ յեղանակ է լինում:

Անտիցիկլոնում ընդհանրապես թույլ քամիներ են փչում և տեղ-տեղ քամիներ չեն լինում:

ՅԵՂԱՆԱԿԻ ՆԱԽԱՏԵՍՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆ
ՀԱՏԿԱՆԻՉՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Հիմա մեզ հայտնի յե, վոր յեղանակը կախում ունի նրանից՝

1. Թե վերտեղից և ինչպիսի ողային հոսանք և մեզ մոտ գալիս՝ կայման, թե անկայուն, տրոպիկական, բևեռային, թե արկտիկական:

2. Ցմւրտ, թե տաք ֆրոնտն և մեզ մոտենում, մենք ցիկլոնմւմ ենք գտնվում, թե անտիցիկլոնում:

Յեթե մենք այս բոլորի մոտեցումը ցույց տվող հատկանիշները լավ իմանանք և նշենք. թե ինչպիսի յեղանակներ են տեղի ունենում նրանցում, այդ ժամանակ մենք կարող ենք ասել՝ յեղանակների փոփոխություն կլինի, թե վոչ:

Քանի վոր այս բոլորի մոտեցման առաջին հատկանիշները յերևում են, մեզ մոտ հասնելուց մոտ 8—18 ժամ առաջ, ուստի մենք տեղական հատկանիշների միջոցով, յեղանակների փոփոխման մասին կարող ենք ասել միայն մոտակա ժամանակի համար, ամենաշատը 1 օրվա համար: Միայն կայուն յեղանակների ժամանակ կարող ենք ասել 1—2 օր առաջ:

Տեղական հատկանիշների միջոցով յեղանակների նախատեսումներ տալու համար հարկավոր և ամեն օր հետևել յեղանակի փոփոխմանը, գրի առնել նկատված յերևույթները, զլիսափորակառու ուղղություն գարձնել ամպերի, քամու ուղղության և ուժի, մթնոլորտի ճնշման փոփոխման, օդի բարեխառնության, խոնավության, մառախուղների և մթնոլորտային օպտիկական յերևույթների վրա. ոգտակար և նաև հաշվի առնել ցողը, յեղյամը և այլ յերևույթներ:

Անհրաժեշտ և գրեթե յեղանակի նախատեսումները և հետո, համեմատելով յեղանակի հետ՝ հաշվի առնել, թե վերջան ճիշտ և յեղել նախատեսումը, ինչպիսի սխալներ են յեղել և ինչո՞ւ: Այս հաշվառումը յեղանակների նախատեսումների համար մեզ մի շարք նոր հատկանիշներ կարող և տալ, վորոնք կոգնեն մեզ ավելի ճիշտ և յերկար ժամանակի համար նախատեսումներ տալ:

Տեղական հատկանիշներ կոչվում են մթնոլորտում կատարվող բոլոր այն յերևույթները, վորոնք կարելի յե հայտարարել ավյալ տեղում դիտումներ կատարելով:

Տեղական հատկանիշները լինում են ընդհանուր և առանձնահատուկ՝ տվյալ տեղի համար:

Ընդհանուր տեղական հատկանիշներն ամենուրեք էլ տեղական հատկանիշներ են:

Առանձնահատուկ տեղական հատկանիշները կիրառելի յեն միայն տվյալ տեղիտորիայի համար, իսկ այլ տեղի համար տեղական հատկանիշներ չեն: Յերևույթների փոփոխությունը վորջան դանդաղ լինի, յեղանակի փոփոխությունն այնքան դանդաղ կլինի, ու այդ յեղանակը յերկարատև կլինի, և ընդհակառակը:

Վորջան տեղական հատկանիշների տեսակները շատ լինեն, յեղանակի փոփոխությունն այնքան հալանական կլինի:

Յերբ տեղական հատկանիշներից մեկը հակասի մյուսին, յեղանակը փոփոխական կամ անորոշ կլինի:

Ինչպես ասացինք, նախատեսումներ կարելի յե տալ ամպերի, մթնոլորտային ճնշման, քամու, մթնոլորտային օպտիկական յերևույթների և այլ միջոցներով:

Փետրամպերն ու յեղանակի ետխաստումը. — Փետրամպերի միջոցով յեղանակը նախատեսելու համար անհրաժեշտ և հաշվի առնել հետևյալ տարրերն ու պայմանները—փետրամպերի շարժումը, ուղղությունն ու արագությունը, դիտման ժամանակ նրանց տարրեր ձևերը, նրանց ձևափոխման աստիճանն ու բնույթը և բազայի գոյությունը:

Փետրամպերը գտնվում են 7 կիլոմետրից մինչև 11 կիլոմետր բարձրության վրա: Նրանք միշտ սպիտակ են ու պարզ: Անցնելով արևի ու լուսնի առջից՝ ստվեր չեն գցում:

Արևն ու լուսինը փետրամպերի հետևից յերևում են համարյա այնպես, ինչպես յերևում են պարզ ժամանակ: Արևը ծագելու և մայր մտնելու ժամանակ փետրամպերը կարմրավուն

գույն են ստանում: Նրանք յերբեմն յերկար շերտով են ձգվում
ամբողջ յերկնքում, յերբեմն ել՝ համատարած բարակ շերտով:

Փետրամպերը թե ձմեռը և թե ամառն ինչպես մեզնում,
այնպես ել ամենատաք յերկրներում շարունակ բաղկացած են
բյուրեղներից, վորոնք ողի մեջ իրարից համեմատական չափով
հեռու յեն լողում:

Մի շարք դիտողութուններից պարզվել է, վոր յեթե յեր-
կրնքում համարյա անշարժ փետրամպերի բարակ շերտ յերևա,



Նկ' 8. Փետրավոր ամպեր՝ Շի

վորոնց թիվը յերևես ու վորևե ուղղությամբ չմեծանա, առաջ
գան կեսորին և անհետանան յերեկոյան, պետք է սպասել, վոր
պարզ յեղանակը կշարունակվի դեռ 10—12 ժամից ավելի:

Կարող է պատահել, վոր փետրամպերի հալչելն որական
ընթացքի հետ կապված չլինի—նրանց հալչելը կատարվի նոր

ամպեր առաջանալու կամ ավելանալու հետևանքով: Այս հալ-
չելն ավելի շուտ յեղանակի վատացման հատկանիշ է:

Փետրամպերն արևելքից առանց ձևերի փոփոխման շարժ-
վելիս լավ յեղանակ է սպասվում:

Փետրամպերը դիտավորապես շարժվում են արևմուտքից,
վորտեղից դիտավորապես գալիս են ցիկլոնները:

Յեթե կանգնենք այնպես, վոր ամպերը ձախ թևից դեպի
աջ թևը շարժվեն, քամին ուղիղ մեր ծածրակին փչի կամ միքիչ
աջ, այն ժամանակ ձախ ձեռքի ցույց տված կողմը ցիկլոնի
կենտրոնը կլինի:

Յեթե յերկնքում փետրամպերի շարժվող առանձին բարակ
շերտեր տեսանք, վորոնց թիվը վորևե ուղղությամբ ու ժամա-
նակամիջոցում մեծանա, յերեկոյան շանհետանա և յերկինքն աս-
տիճանաբար ծածկի, պետք է սպասել յեղանակի վատացում:

Յեթե փետրամպերի ձևերի ուժեղ փոփոխում է առաջ գա-
լիս, վորով անանաչելի յեն գառնում, առանձին ամպերի քայ-
քայում ու փետրամպերի ծածկոցի խտացում է առաջ գալիս—
դանդաղաչարժ ցիկլոն պետք է սպասել:

Յեթե փետրամպերն աստիճանաբար արագ ծածկեն յերկին-
քը և նրանց յերևալուց 1—2 ժամ հետո փետրաշերտավոր, մի-
քիչ հետո՝ բարձր շերտավոր ամպեր յերևան, հավանորեն 10—12
ժամ հետո ցիկլոն պետք է սպասել:

Յեթե փետրամպերի յերևալու առաջին որը փետրաշերտա-
վոր և բարձր շերտավոր ամպեր յերևան, այլ մյուս որը յերե-
վան, ցիկլոն պետք է սպասել 2—3 օրից:

Յերևանում կատարածու մի շարք դիտողութուններ գալիս
են հաստատելու, վոր վերոհիշյալ հատկանիշները տեղական
հատկանիշներ են նաև Հայաստանի համար:

Բերենք որինակներ.

1933 թ. մայիսի 22-ի առախոտյան Յերևանում քամի չկար:
Հյուսիս-արևմուտքից 2 մետրվայրկյան արագությամբ շարժ-
վող փետրավոր ամպեր յերևացին: Մի քիչ հետո նկատվեցին
փետրա կույտավոր և փետրա-շերտավոր ամպեր: Բարոմետրական
ճնշումը քանի պնում, ընկնում եր: Յերեկն ուժեղ քամի բարձ-
րացավ (7 բալլ), վորը հյուսիս արևելքից եր փչում: փետրավոր
և փետրա-շերտավոր ամպերը ցերեկն սկսեցին շարժվել արև-
մուտքից 3 մետրվայրկ. արագությամբ: Յերեկոյան առաջ յե-
կան շերտա-կույտավոր և կույտա-անձրևային ամպեր, վորոնք

շարժվում էին արևմուտք-հարավ-արևմուտքից 4 մետր վայրկյարագությամբ: Յերկու ժամ հետո յերևացին բարձր-շերտավոր և բարձր-կույտավոր ամպեր: Գիշերը՝ 23-ի առավոտյան ուժեղ անձրև տեղացա: Անձրևից հետո սկսեց բարոմետրական ճնշումը բարձրանալ և ողի բարեխառնությունը նվազել: Մայիսի 24-ին բարոմետրական ճնշումը նորից սկսեց նվազել: Մայիսի 25-ի յերեկոյան սկսեց մինչև հունիսի 3-ն ընդմիջումներով անձրև տեղալ:

Բերածս որինակից յերևում է, վոր Յերևանի վրայով ցիլոնն է անցել:

Մի ուրիշ դեպք ևս, հունիսի 13-ի առավոտյան հարաբերական խոնավությունը մեծանում եր: Առավոտյան ժամը 5 և 45 րոպեյին արևմուտքում, հորիզոնի մոտ փետրամպեր յերևացին, մեկ ժամից հետո՝ փետրա-շերտավոր ամպեր, վորոնց թիվը մեծանում և շարժվում են դեպի արևելք 4 մետր վայրկյարագությամբ ժամը 31 և 30 րոպեյին անձրև տեղացա: Հունիսի 14-ին նույնպես ամպրոպային բնույթ կրող անձրև տեղացա: Յերեկոյան ժամը 20 և 30 ր. ծիածան յերևաց, վորն իր բոլոր գույներն ունեեր: Հունիսի 15-ի դիչերն առաջ յեկան բարձր-շերտավոր, իսկ առավոտյան՝ լավ յեղանակին՝ կույտավոր ամպեր, վորոնք ցերեկը վերածվեցին բարձր-շերտավոր և կույտա-անձրևային ամպերի: Բարոմետրական ճնշումն սկսեց ընկնել: ժամը 24-ից, ընդմիջումներով, մինչև լույս 16-ն անձրև տեղացա:

Յեթե յերկինքը մինչև հորիզոնը պարզ լինի, կարող ենք ասել, վոր մեծ տարածություն վրա լավ յեղանակ է:

ԿՈՒՅՍԱՎՈՐ ԱՄՊԵՐ

Կույտավոր ամպերը լողում են մեկից մինչև մեկ ու կես կիլոմետրից վոչ բարձր. նրանք նման են գոլորշու կույտի: Յերբեմն նման են սպիտակ բամբակի կամ կաղամբի, վորոնց հիմքը, աչիւնքն՝ ներքեի մասը հարթ է և մուգ, իսկ վերեից՝ սպիտակ և սարի նման: Արևի մոտից անցնելիս նրանք ծածկում են արևն ու յերկրի վրա ստվեր գցում: Կույտավոր ամպերը միշտ բաղկացած են ջրի մասը կաթիլներից, դրա համար ել նրանք լողում են միայն այնպիսի բարձրություն վրա, վորտեղ ողբ տաք է: Ձմեռը կույտավոր ամպեր շատ հազվագյուտ դեպքում են լինում:



Նկ. 9. Երբտար-կույտավոր ամպեր S(Cu)

կույտավոր ամպերից առաջ են գալիս կույտա-ամպրոպային, կույտա-տնձրեային ամպեր:

Յերբ տաք ժամանակ տուփոտները կույտավոր ամպեր (Cu) են առաջ գալիս, վորոնք բամբակի կամ կաղամբի նման են, գազաթ և հարթ հիմք ունեն, համարյա անշարժ են, կամ շատ դանդաղ կերպով են շարժվում, կեսորին հասնում են փոքր զարգացման և յերեկոյան անհետանում, գիշերը պարզ և Յեթե դրան ուրիշ հակասող հատկանիշ չկա, պետք է սպասել, վոր լավ յեղանակը դեռ կշարունակվի 12 ժամ և ել ավելի:

Յեթե կույտավոր ամպերը մեծ չեն, գետնի վրայի քամու ուղղությամբ արագ են շարժվում, պետք է սպասել վոր լավ յեղանակը կշարունակվի մինչև 12 ժամ:

Յեթե կույտավոր ամպեր մեծ քանակությամբ առաջ են գալիս յերեկոյան, չեն անհետանում, նրանց հիմքը սևանում, քայքայվում է, ձեռ կորցնելով ձուլվում են իրար հետ և փոփոխվում անձրևային ամպերի, յեղանակի վատացում պետք է սպասել:

Յեթե կույտավոր ամպերի գազաթը քայքայվում կազմում է (AlCu) բարձր կույտավոր ամպեր (ինվերսիան գտնվում է միջին հարկի ամպերի բարձրության վրա), պետք է սպասել յեղանակի վատացում մոտ 12—24 ժամից հետո, իսկ յեթե կույտավոր ամպերի գազաթները քայքայվելով առաջ են գալիս (StCu) շերտա-կույտավոր ամպեր (ինվերսիայի շերտը գտնվում է ներքևի ամպերի բարձրության վրա), այդ դեպքում պետք է սպասել յեղանակի վատացում ավելի կարճ ժամանակում (12 ժամից շուտ):

Յեթե առավտից առաջ յեկած կույտավոր ամպերն աճում են և կեսորին աշտարակի ձև ստանում, նրանցից առաջ են գալիս (Cl) փետրավոր ամպեր, հավանորեն ամպրոպ և հորդ անձրև կլինի, վորը մեծ տարածություն կբռնի: Այդպիսի փետրավոր ամպերը լինում են ցիկլոնի թիկունքային մասում և կոչվում են «կեղծ»: Իրանք յեղանակի փոփոխման հատկանիշներ չեն:

Յեթե յերկնքի բոլոր կողմերում բարձր ու սպիտակ ամպերի յերկար շերտեր-փետրավոր տարածվեն, հետո յերկրնքում հարթ հիմքով կույտավոր ամպեր նկատվեն, վորոնք վերևից աճեն, շարունակ ավելանալով սարի ձև ընդունեն, առա-

ջառն ուր տոթ (խեղզող) լինի, ձաշի գեմ բարձրանա և ընդմիջումներով ուժեղ քամի փչի, կեսորին յերկնքում ամպրոպային ամպեր յերևան, իսկ նրանց դիմաց մեծ ու մութ ամպեր բարձրանան, այդ ժամանակ ամպրոպային կարկուտ պետք է սպասել:

Յերևանում իմ կատարած մի շարք դիտողություններից պարզվեց, վոր յեթե արևմտյան կամ հարավ-արևմտյան կողմում և Մասսի մոտ կույտավոր ամպեր են առաջ գալիս, աճելով վեր են բարձրանում և աշտարակի ձև ստանում, վորը փետրավոր է աջձակում, վորոնք քանի գնում շտանում են, հետո կույտա-անձրևային ամպեր և բարձր շերտավոր ամպեր են առաջ գալիս, քամի յե բարձրանում և ընդմիջումներով փչում, այդ ժամանակ ուշ յերեկոյան, կամ գիշերն ամպրոպ է լինում և կարճատև անձրև է տեղում:

Որինակ՝ 1933 թ. հունիսի 21-ի առավոտյան յերևացին լավ յեղանակի կույտավոր ամպեր, վորոնք իրենցից փետրավոր արձակեցին և առաջ յեկան կույտա-անձրևային և բարձր շերտավոր ամպեր: Յերեկոյան ժամը 9-ին ամպրոպ տեղի ունեցավ, յերկնքը ծածկվեց կույտա-անձրևային ամպերով և կարճատև ուժեղ ու հորդ անձրև տեղաց: Յերևանում կատարածս դիտողություններից պարզվեց նաև հետևյալը. յերբ Յերևանում շոգ է լինում, առավոտներն արևի ծագելուց հետո առաջ են գալիս լավ յեղանակի կույտավոր ամպեր, կեսորին դրանց թիֆն ավելանալով՝ առաջ են գալիս կույտա-անձրևային և բարձր կույտավոր ամպեր (կույտավոր ամպերի գազաթի ծորումից առաջացած) և վերին շերտավոր ամպեր, վորոնց առանձին մասերը նման են բարձր կույտավոր ամպերի: Յերեկոներն ուժեղ քամի յե փչում (հյուսիսից կամ հյուսիս-արևելքից), ընդհանրապես յերեկոներն ամպրոպ է լինում ու կարճատև անձրև տեղում, վորից հետո քամին հանդարտում է ու յերկնքը պարզում,

Յեթե հորիզոնի մոտ կույտա-անձրևային ամպեր կան, վորոնք մեծ սարի ձև, սպիտակ գազաթ ու սև հիմք ունեն, հաճախ փետրավոր են արձակում, պետք է սպասել անցողիկ տեղում, յերբեմն ել՝ կարկուտ:

Յեթե յերկնքում փետրավորի ներկայությամբ բարձր կույտավոր ամպեր յերևան, վորոնք նման են արագ փոփոխվող փոքր գնդի և տեղափոխվում են փետրավորի ուղղությամբ,

կան նաև վերին շերտավոր ամպեր, տեղումներ պեռք և սպասել 14 ից մինչև 10 ժամ հետո:

ՇԵՐՏԱՎՈՐ ԱՄՊԵՐ St

Մթնոլորտի ներքին շերտերում՝ դետնի մոտ տեղի ունեցած պրոցեսներից առաջ յեկած ամպերի շարքն են դասվում նույնպես շերտավոր ամպերը, վորոնք միասեռ շերտ ունեն: Կույտավոր ամպերին հակառակ, շերտավոր ամպերն ավելի մեծ տարածություն են բռնում և բարակ շերտ ունեն: Շերտավոր ամպերի բարձրությունը տատանվում է 50-ից մինչև 2000 մետրի միջև:

Յեթե շերտավոր ամպերն առավոտյան, պարզ գիշերից հետո յին առաջգալիս և ցրվում են ժամը 10—11-ին, պետք է սպասել, վոր անտիցիկլոնական տիպի յեղանակը կշարունակվի 12 ժամից ավելի:

Յեթե թույլ քամու կամ հանդիսա ժամանակ շերտավոր ամպերի համատարած շերտ է նկատվում, վորը կեսորին, յերբեմն ել ամբողջ որը չի ցրվում, այդ դեպքում դիտված յեղանակը կշարունակվի մոտ 12 ժամից ավելի:

Յեթե ուժեղ քամու ժամանակ շերտավոր ամպերի համատարած շերտը կեսորին, յերբեմն ել ամբողջ որը չի ցրվում, դիտված յեղանակը կարող է շարունակվել 0 ժամ է ավելի:

ԲԱՐՁՐ ՇԵՐՏԱՎՈՐ ԱՄՊԵՐ (AlSt)

Բարձր շերտավոր ամպերը գտնվում են 2-ից մինչև 6 կիլոմետր բարձրության վրա և համարյա հավասար շերտով ծածկում են ամբողջ յերկինքը, նրանք բաղկացած են ջրի մանր կաթիլներից: Դրա համար ել նրանք կիսաթափանցիկ են, աստղերը ծածկում են, իսկ արևն ու լուսինը նրանց հետևից յերբվում են:

Չերոյից ցածր ամտիճանում այդ ամպերը հաճախ կազմված են սառցի բյուրեղներից կամ ձյան փոքր փաթիլներից:

Բարձր շերտավոր ամպերը լուսնի շուրջը փոքր պսակ (առեյ) են առաջ բերում, վորի դրսի մասը վերջանում է կարմիր գույնով, իսկ ներսինը՝ կանաչ-կապույտ գույնով: Վերջինիս վերաբերյալ մանրամասն կանգ կառնենք հետագայում: Այստեղ միայն այսքանը կասենք, վոր յեթե այդ պսակը քանի դնա փոքրանա, այդ ժամանակ անձրև պետք է սպասել:

Բարձր շերտավոր ամպերից անձրև կամ ձյուն կարող է տեղար Յերբ անձրևն սկսում է ուժեղանալ, այդ դեպքում ամպերի շերտը խտանում, իջնում և ներքև ու փոխվում շերտանձրևային ամպերի: Չյունտեղայու ժամանակ, թեկուզ և ուժեղ, բարձր շերտավոր ամպերն իրենց աեսքը (կառուցվածքը) չեն փոխի:

Բարձր շերտավոր ամպերը կարող են առաջ գալ բարձր կույտավոր ամպերից և, ընդհակառակը, կարող են վերածվել բարձր կույտավոր ամպերի:

Յերբ բարձր շերտավոր ամպերն ավելի վեր են բարձրանում, այդ ժամանակ նրանց մեջ յեղած ջրային գոլորշիները սառչում են և բարձր շերտավոր ամպերը վեր են անվում շերտափետրամպերի: Այդ շերտափետրամպերը կազմված են շատ փոքր սառցաբյուրեղներից: Այդ ամպերի հետևից յերևում են նաև աստղերը: Գիշերները փետրա-շերտավոր ամպերը հազիվ են նկատվում: Յերբ փետրա-շերտավոր ամպերն անցնում են արևի կամ լուսնի մոտից, այդ ժամանակ նրանց շուրջը մեծ ու սպիտակ շրջան են ստեղծում: Այդ մեծ ու սպիտակ շրջանը ձմեռն ուժեղ ցուրտ է ցույց տալիս, իսկ գարունը, ամառն ու աշունը յերկար ժամանակով յեղանակի վատացում է նախատեսվում: Որինակ՝ 1934 թ. ապրիլի լույս 11-ի գիշերը լուսնի շուրջը Յերևանում մեծ ու սպիտակ շրջանակ եր բռնել, ապրիլի 11-ից սկսեց յեղանակը վատանալ, ամպամածությունն ավելացավ և տեղումներ յեղան: Այդ յեղանակը շարունակվեց մինչև ապրիլի 21-ը:

Յերբ յերկնքում 3-ից մինչև 6 և նույնիսկ 9 կիլոմետր բարձրության վրա՝ առաջ են գալիս բարձր շերտավոր ամպեր և յերբ շերտավոր ամպերը փետրավորի յին փոխվում, այդ ցույց է տալիս, վոր խոնավ ողը ներքևից վերև է գնում: Վերևում այդ խոնավ ողից ամպեր են առաջ գալիս: Այդ դեպքում վատ յեղանակ կամ ձյուն պետք է սպասել:

Յեթե յերկնքում նկատվի բարձր շերտավոր ամպերի համատարած շերտ, վորն առաջ է յեկել բարձր կույտավոր (AlCu) ամպերի քայքայումից, անկախ (ClSt) փետրա-շերտավոր ամպերից և յեթե որվա ընթացքում բարձր շերտավոր ամպերը բազմիցս վերածվեն բարձր կույտավոր ամպերի և, ընդհակառակը, պետք է սպասել, վոր մոտ 12 ժամ տեղումներ չեն լինի:

Յեթե փետրամպերից (Сi) անմիջապես հետո բարձր շերտավոր ամպերի (AlSt) համատարած շերտ առաջ գա, պետք է սպասել, վոր 6-22 ժամ հետո տեղումներ կտեղան:

Յեթե բարձր շերտավոր ամպերը (AlSt) վերածվեն անձրև-վա-շերտավոր (NbSt) ամպերի, տեղումները սկիզբն է, տեղումները կարող են շարունակվել 12 ժամ և ավելի:

Յեթե անձրևային շերտավոր ամպերը (NbSt) փոխված են բարձր շերտավոր (AlSt) կամ բարձր կույտավոր (AlCu) ամպերի և տեղումները թուլանում են, պետք է սպասել յեղանակի լավացում: Որինակ՝ Յերևանում 1934 թ. մայիսի 13-ին յերկինքը ծածկված էր անձրևա-շերտավոր ամպերով (NbSt), անձրև էր տեղում, վորը թուլացավ, և կեսորից հետո անձրևային շերտավոր ամպերը փոխվեցին բարձր կույտավոր ամպերի (AlCu): Արևը մայր մտնելիս բարձր կույտավոր ամպերը կարմիր գույն ստացան: Մայիսի 14-ին պարզ յեղանակ յեղավ:

Յեթե անձրևա-շերտավոր ամպերն անցնելուց և տեղումները դադարելուց հետո յերկնքում շերտա-կույտավոր ամպերի համատարած շերտ (StCu) նկատվի, պետք է սպասել ամպամածության աստիճանաբար նվաղում: Որինակ՝ Յերևանում մայիսի 15-ի կեսորից հետո կույտավոր ամպերի (Cu) գազաթնթի քայքայումից բարձր կույտավոր (AlCu) և կույտա-շերտավոր ամպեր (StCu) առաջացան և սրանք էլ իրենց հերթին վերածվեցին (NbSt) անձրևա-շերտավոր ամպերի ու անձրև տեղաց: Մայիսի 16-ին առավոտյան անձրևից հետո անձրևա-շերտավոր ամպերը (NbSt) փոխվեցին շերտա-կույտավոր (StCu) ամպերի, ամպամածությունն աստիճանաբար սկսեց նվազել: Մայիսի 17-ին Յերևանում փոփոխական ամպամածություն էր՝ առանց տեղումների: Յեթե անձրևա-շերտավոր (NbSt) ամպեր և տեղումներ չեն յեղել և շերտա-կույտավոր (NbSt) ամպերի համատարած շերտը յերկինքը բռնել է, պետք է սպասել, վոր դեռ 6-10 ժամ տեղումներ չեն լինի:

Յերևանում կատարած դիտողություններից պարզվեց,

1. յեթե Մասսի լանջին կույտավոր ամպեր հավաքվեն, վորոնք քանի գնան մեծանան և շերտա-կույտավոր ամպերի կամ անձրևա-շերտավոր ամպերի փոխվեն ու յերեկոյան չհալչեն, պետք է սպասել, վոր Յերևանում տեղումներ կտեղան:

2. յեթե Մասսի լանջին շերտավոր ամպեր (St) հավաքվեն, վորոնք վեր բարձրանալով ծածկեն ամբողջ Մասիսն ու

վերածվեն անձրևային ամպերի, պետք է սպասել յեղանակի վատացում՝ ամպամածության մեծացումով և տեղումներով:

3. յեթե Մասսի դազաթին շերտա կույտավոր ամպեր (StCu) կամ անձրևա-շերտավոր ամպեր (NbSt) հավաքվեն ու գնալով մեծանան, յերկնքում շարժվող փետրավոր ամպեր յերևան, վորոնք յերեկոյան չանհետանան, այլ շատանան, Յերևանում 8-ից 18 ժամ հետո տեղումներ կլինեն: Որինակ՝ 1934 թ. մայիսի 1-ին, 2-ին և 3-ին պարզ յեղանակ էր. մայիսի 3-ին յերեկոյան մոտ ժամի 15-ին Մասսի դազաթին սկսեցին շերտա-կույտավոր ամպեր (StCu) հավաքվել, վորոնք թիփը աստիճանաբար մեծացաւ: Նույն որը՝ կեսորից հետո, յերկնքում արևմուտքից դեպի արև-վելք դանդաղ շարժվող (Сi) փետրավոր ամպերի բարակ շերտեր յերևացին, վորոնք թիփը, շատ դանդաղ, յերբեմն մեծանում էր, յերբեմն՝ փոքրանում. յերեկոյան ժամը 20-ից հետո թիփը մեծացավ, ուժեղ ու կարճատև քամի վիչեց: Մայիսի 4-ին յեղանակը վատացավ. Յերևանում առավելապես ամպամած էր՝ առանց տեղումների, իսկ շրջաններից մի քանի տեղ տեղումներ յեղան: Լույս 5-ի գիշերը և առավոտյան Յերևանում անձրև տեղաց:

4. յեթե Յերևանից դիտելիս արևմուտքում կամ հարավ-արևմուտքում առաջ գան կույտավոր ամպեր (Cu), վորոնց հիւքերը սեանան ու վերածվեն անձրևա-կույտավոր ամպերի կամ շերտա-կույտավոր ամպերի և գնալով թիփը մեծանա, մի քանի ժամից հետո Յերևանում կարող են կարճատև տեղումներ լինել:

Յեթե տարվա տաք ժամանակներին արևը մայր մտնելուց հետո յերկրածուղ մառախուղ առաջ գա և արևի ծագելուց հետո ցրվի, պետք է սպասել, վոր անտիցիկլոնային տիպի յեղանակը կշարունակվի 12 ժամ և ավելի, իսկ յեթե արևի ծագելուց առաջ ցրվի, պետք է սպասել, վոր յեղանակը կփոխվի ցիկլոնական տիպի յեղանակի:

2. Ցող կամ յեղյալ.— Յեթե արևը մայր մտնելուց հետո, հանդարտ կամ թույլ քամու ժամանակ ցող կամ յեղյալ առաջ գա և արևը ծագելուց հետո վերանա, կարելի յե սպասել, վոր անտիցիկլոնային տիպի յեղանակը կմնա 12 ժամից ավելի, իսկ յեթե թույլից քիչ ուժեղ քամու ժամանակ առաջ գա, անտիցիկլոնային տիպի յեղանակը կարող է 6 ժամից ավելի մնալ:

3. Յեղումակի նոխարանումն ողի բարեխառնություն միջացավ.— Յեթե բարեխառնությունը բավականին զգալի որական

ընթացք ունի, պետք է սպասել, վոր անտիցիկլոնային տիպի յեղանակը կմնա 12 ժամից ավելի, իսկ յեթե որական ընթացքը խանգարվի.

1. յերբ պարզ է կամ ամպամածությունն ուղիղ որական ընթացք ունի, պետք է սպասել յեղանակի աստիճանաբար փոփոխում ցիկլոնային տիպի յեղանակի.

2. յերբ փետրավոր ամպեր կան, պետք է սպասել, վոր մոտ 12—20 ժամ հետո յեղանակը կփոխվի ցիկլոնային տիպի յեղանակի.

3. յերբ փետրա-չերտավոր, բարձր շերտավոր կամ անձրե-վա-չերտավոր ամպեր կան, ցիկլոնային տիպի յեղանակ պետք է սպասել:

Յեթե գիշերը ցածր տեղերում (հովիտներում) ցուրտ է, իսկ բարձր տեղերում տաք (ինվերսիա), այդ դեպքում անտիցիկլոնային տիպի յեղանակը կմնա 11 ժամից ավելի:

Յեթե յերեկոյան և գիշերն անտառում ավելի տաք է, քան բաց տեղում, անտիցիկլոնային տիպի յեղանակը դեռ մի վորոշ ժամանակ կմնա:

4. Քամու միջոցով.— Յեթե քամին սովորական որական ընթացք ունի՝ կեսորից հետո (շոգ ժամանակ)՝ ուժեղացում, յերեկոյան՝ թուլացում, գիշերը՝ հանդիստ, իր ուղղությունն արևի ուղղությամբ (ժամացույցի սլաքի ուղղությամբ) փոխի, անտիցիկլոնային տիպի յեղանակ կլինի:

Յեթե անտիցիկլոնային տիպի յեղանակ է, հանդիստ է, պետք է սպասել, վոր նույն յեղանակը կշարունակվի 12 ժամից ավելի:

Մեզ մոտ տաք ժամանակ յեթե քամիները սովորական ընթացք ունեն, ցիկլոն կողմից դեպի լեռներն են փչում, իսկ գիշերները՝ լեռներից դեպի հովիտը, յեթե չկան տեղական հակասող այլ հատկանիշներ, պետք է սպասել, վոր անտիցիկլոնային տիպի յեղանակը կմնա 24 ժամից ավելի:

Շոգ ժամանակ Յերևանում յերեկոները հյուսիսից կամ հյուսիս-արևելքից մինչև 8 ըսլ ուժեղ քամիներ են փչում, գիշերները հանդիստ է լինում, հյուսիսից կամ հյուսիս-արևելքից յերբեմն շատ թույլ քամիներ են փչում: Առավոտները նույնպես հանդիստ է լինում և արևելքից յերբեմն շատ թույլ քամիներ են փչում. ցերեկն արևմուտքից կամ հարավ-արևմուտքից թույլ քամիներ են փչում:

Յեթե Յերևանում քամիները տաք ժամանակ այսպիսի ընթացք են ունենում, պետք է սպասել, վոր անտիցիկլոնային տիպի յեղանակը կշարունակվի 24 ժամից ավելի, իսկ յեթե այս ընթացքը խանգարվում է, ցիկլոնային տիպի յեղանակ պետք է սպասել:

Յեթե յերեկոյան ուժեղ քամի յե բարձրանում և գիշերը չի թուլանում, պետք է սպասել յեղանակի վատացում:

Յերբ քամու ուղղությունը չի փոխվում, անտիցիկլոնային տիպի յեղանակ է.

1. մթնոլորտային ճնշումը մեծանում է, անտիցիկլոնային տիպի յեղանակը կմնա 12 ժամից ավելի:

2. մթնոլորտային ճնշումն ընկնում է, պետք է սպասել յեղանակի վատացում:

3. մթնոլորտային ճնշումը համարյա չի փոխվում, դիտված յեղանակը կշարունակվի 12 ժամից ավելի:

Յերբ քամու ուղղությունը չի փոխվում, ցիկլոնային տիպի յեղանակ է.

1. յեթե ճնշումն ընկնում է, պետք է սպասել քամու ուղղության փոփոխում:

2. ճնշումը բարձրանում է, քամին կթուլանա:

3. ճնշումը չի փոփոխվում, դիտված յեղանակը կշարունակվի 12 ժամից ավելի:

Յեթե ըստ բարձրության քամու ուղղությունը գետնի յերեսի քամու ուղղության նկատմամբ դեպի աջ թեքվի, ցիկլոնային տիպի յեղանակ պետք է սպասել, իսկ յեթե դեպի ձախ թեքվի, անտիցիկլոնային տիպի յեղանակ պետք է սպասել:

5. Մթնոլորտային ճնշումն միջոցով.— Յերբ ամբողջ որը է ավելի, մթնոլորտային ճնշումն անընդհատ ու հավասարաչափ մեծանում է. ա) յեթե յերկինքը պարզ է կամ անտիցիկլոնային տիպի յեղանակի ամպեր կան, անտիցիկլոնային տիպի յեղանակը կշարունակվի 12 ժամից ավելի, բ) յեթե ամպամածությունը նվազում է, պետք է սպասել, վոր յեղանակը կփոխվի անտիցիկլոնային տիպի յեղանակի:

Յեթե բարձրագույն ճնշումը (բարոգրաֆը) արագ ու հավասարաչափ բարձրանում է, ամպ չկա, անտիցիկլոնային յեղանակը կմնա 12 ժամից վոշ պակաս, իսկ յեթե ամպ կա, բայց թիվը նվազում է, յեղանակն արագ կերպով կփոխվի անտիցիկլոնային տիպի յեղանակի:

Յեթե բարոմետրական ճնշումն դգալի չափով մեծանում կամ փոքրանում և և բարոգրաֆի կորի վրա գգալի թռիչք կա, պետք է սպասել շկվալի և, հաճախ՝ ամպրոպի:

Յեթե բարոմետրական ճնշումը դանդաղ եր բարձրանում, բայց սկսեց ավելի արագ բարձրանալ, և յեթե բարոգրաֆի վրա ուռուցիկը գեպի ներքև դարձված լինի, ամպ չլինի, պետք է սպասել: Վոր անտիցիկլոնային տիպի յեղանակը յերկար չի մնա: Յեթե ամպամածութունը նվազում և, պետք է սպասել, վոր ցիկլոնային տիպի յեղանակը փոխվի անտիցիկլոնային տիպի յեղանակի:

Յեթե բարոմետրական ճնշումն արագ բարձրացումից դանդաղ բարձրացման փոխվի, բարոգրաֆի վրա ուռուցիկը դեպի վեր դարձված կլինի, յեթե ամպ չկա, կամ նվազում և, պետք է սպասել, վոր անտիցիկլոնային տիպի յեղանակը կմնա 12 ժամից ավելի ու քամիները կթուլանան:

Հիմա ամպոփ կերպով նշենք այն բոլոր հատկանիշները, վորոնք ցույց են տալիս տաք կամ ցուրտ ֆրոնտների մոտեցումը, յեղանակները տարբեր ողային զանգվածներում ամառը և ձմեռը, կայուն լավ յեղանակ լինելը, յեղանակի վատացումը, կայուն ու վատ յեղանակ լինելը, յեղանակի լավացումը:

6. Տաֆ Ֆրոնտի հատկանիշները.—1. առաջ են գալիս փետրամպեր, վորոնց շարժումը տեսանելի յե, և շարժվում են այն կողմից, վորտեղից տաք ֆրոնտն է մոտենում մեզ: Մեծ մասամբ նրանք շարժվում են հարավից, հարավ-արևմուտքից, յերբեմն՝ հյուսիս-արևմուտքից: Փետրամպերը վեր են ածվում փետրաշերտավոր և բարձր շերտավոր ամպերի:

2. քամին ուժեղանում և և փոխում իր ուղղութիւնը ժամացույցի սլաքի ուղղութիւնը:

3. մթնոլորտային (բարոմետրի) ճնշումն ընկնում և, և վորքան արագ կերպով ընկնի, տաք ճակատն այնքան շուտ կգա մեզ մոտ, ցիկլոնն այնքան արագ կմոտենա մեզ:

4. ոչի բարեխառնութիւնը ձմեռը բարձրանում և, իսկ ամառը՝ մի քիչ նվազում: Չմեռը ցրտերը մեղմանում են, իսկ ամառը հով և լինում: Ամպերի թիվը մեծանում և և քամին ուժեղանում: Իհարկե, բացի սրանից, ուրիշ հատկանիշներ էլ կան,

Յեթե այս չորս հատկանիշը նկատվում և, մեծ հավանակաութիւնով կարելի յե սպասել, վոր մեր վրայից տաք ֆրոնտ

կանցնի, հետևապես պետք է անձրևի սպասել, վոր մեծ տարածութիւն կրանի:

7. Ֆուրս Ֆրոնտի մոտեցումն հատկանիշները.—Միայն տեղական հատկանիշների միջոցով ցուրտ ֆրոնտի մոտեցումը նախատեսելը շատ դժվար է, քանի վոր շատ արագ է շարժվում: Այն ամպերը, վորոնց միջոցով կարելի յե իմանալ նրա մոտեցումը, յերևում են նրա մոտենալուց 1—2 ժամ առաջ: Հետևապես, ցուրտ ֆրոնտի մոտեցումը մենք կկարողանանք նախատեսել միայն նրա մոտենալուց 1—2 ժամ առաջ:

Ցուրտ ֆրոնտի մոտեցումը ցույց տվող հատկանիշները հետևյալներն են.

1. յերկնքում առաջ են գալիս արագ շարժվող բարձր կույտավոր ամպեր: Քերկիչնքն արագ կերպով ծածկվում և փետրաշերտավոր ամպերով, վորոնք կույտաանձրևային ամպերի նախակարապետն են հանդիսանում, վերջիններիցս տեղում են կարճատև, բայց ուժեղ մթնոլորտային տեղումներ (աժառը հաճախակի դրանց հետ լինում են ամպրոպներ և կարկուտ):

2. քամին դառնում և ժամացույցի սլաքի ուղղութիւնը, ֆրոնտի մոտեցման մոմենտին քամին իր ուղղութիւնն արագ կերպով փոխում և և հանկարծակի ուժեղանում:

3. մթնոլորտային ճնշումն արագ կերպով ընկնում և, իսկ ֆրոնտի մոտեցումից հետո արագ կերպով բարձրանում, քանի վոր մեզ մոտ ավելի ցուրտ (ծանր) ոգ է գալիս:

4. ցուրտ ֆրոնտի մոտեցումից առաջ ողի բարեխառնութիւն փոփոխումն ընդհանրապես նկատելի չէ: Չմեռն ու ամառը ցուրտ ճակատից առաջ մեզ մոտ ընդհանրապես համեմատաբար տաք և լինում, իսկ ցուրտ ֆրոնտի (ճակատի) մ. տեսնալուց հետո ողի բարեխառնութիւնն արագ կերպով նվազում է և և քամին ուժեղանում:

8. Կայուն յեթ լավ յեղանակի հատկանիշները.—Մթնոլորտային բարձր ճնշումը մի քանի որ կրարձրանա: Ամառը քամու արագութիւնն ու ուղղութիւնը հարթ տեղերում նորմալ որակաւն ընթացք կունենա, գիշերը հանպիստ կլինի, իսկ ցիկլոնը կուժեղանա, մինչև կհասր քամին թույլ կերպով կթեքվի դեպի արեը, իսկ կեսորից հետո՝ ընդհակառակը: Մովի կամ մեծ լճերի ափերին (Սևանա լիճ), նույնպես և լեռնային տեղում (ինչպես մեզ մոտ) կնկատվի քամու սովորական ընթացք:

Հաճախ յերկիրնքը պարզ ե լինում: Ձմեռը, հանգիստ ժամանակ, յերբ քամի չկա, յերեկոյան դեմ յերկիրնքը կարող ե ծածկված լինել ներքի ամպերով: Ամառը ցերեկը կուշտավոր ամպեր կարող են լինել, վորոնց թիվը կետրից հետո շատանում ե, իսկ գիշերն անհետանում: Յերբեմն առավոտները շուտ կարող են լինել վերին փետրավոր անշարժ ամպեր, վորոնք որվա ընթացքում կանհետանան:

Յեթե բարձր յերկնքում տարբեր ձևերի կտրատված փետրամպեր կան ե այդ ամպերն անշարժ թվան ու նրանց ներքևում կուշտավոր ամպեր շարժվեն, յերկար ու լավ յեղանակ կարելի յե սպասել:

Որի բարեխառնութիւնը կուեննա սովորական որական ընթացք՝ մեծ ամպլիտուդայով: Բացարձակ խոնավութիւնն զգալի տատանում չի ուեննա ե կհետևի որի բարեխառնութիւնն որվա տատանմանը: Հարաբերական խոնավութիւնը կտա սովորական որական ընթացք՝ մեծ ամպլիտուդայով: Գիշերները յեղյամ կամ ցող կլինի: Փոս տեղերում, փոշոս ճանապարհներէ մտտերը յերեկոները ե գիշերները մառախուղ կլինի, վորը կցրվի արևի ծագելուց հետո:

Անտառում գիշերներն ավելի տաք կլինի, քան դաշտում: Յերեկոները ե գիշերները բարձր տեղերում ավելի տաք կլինի, քան ցածր տեղերում: Արևը մայր մտնելու ժամանակ արևմուտքում (յերկիրնքը պարզ ե) չոր մառախուղ կնկատվի, նույնք կլինի նաև արևելքում՝ սպիտակ արծաթափայլ:

Ծ. Յեղտեակը դեպի վտար գնալու հասկանիւթները.— Մթնոլորտային ճնշումն ընկնում ե, վորքան արագ ե յերկարատե ե այդ, այնքան ուղիղ ե այդ հատկանիշը:

Յեթե պարզ յեղանակին քամին մի քանի որ շարունակ մի ուղղութիւնը փչի, իսկ հետո զգալի չափով իր ուղղութիւնը փոխի, կարելի յե սպասել յեղանակի վատացում՝ անձրևով կամ ձյունով:

Քամին կուժեղանա, ուղիղ որական ընթացքը կթուլանա կամ բոլորովին չի նկատվի:

Ամպամածութիւնը կմեծանա: Արևմուտքում կամ հարավարևմուտքում փետրամպեր կերևան, վորոնց շարժումը նկատելի կլինի, վորից հետո կնկատվեն փետրաշերտավոր ամպեր: Վերջապես դրանց կմիանան վերին, միջին ե ներքեի ամպեր: Կուշտավոր ամպերը յերեկոյան չեն անհետանա, նույնիսկ կշատա-

նան: Նրանք կարող են աշտարակի ձև ստանալ: Յեթե դրանք վերին կուշտավոր ամպեր են, վորոնց վերին մասերը լայնանում են, այդ ժամանակ զգալի խոնավութիւն զեպքում կարկուտ կարելի յե սպասել:

Յեթե ցերեկը պարզ ե, իսկ յերեկոյան ամպերն սկսեն խտանալ ու հաստանալ, պետք ե սպասել անձրև կամ յեղանակի փոփոխում: Յեթե ամպերը շարժվում են վոչ այն ուղղութիւնը, ինչ ուղղութիւնը ներքեի քամին ե փչում, այլ թեքվում են մի կողմ (դեպի աջ), յեղանակի վատացում պետք ե սպասել:

Յեթե գիշերը հանգիստ ե, իսկ առավոտն արևի ծագելուց մի կամ յերկու ժամ հետո քամի յե բարձրանում ե ուժեղանում մինչև կետր ու յերեկոյան չի հանդատանում, այլ ավելի ուժեղանում ե, մթնոլորտային ճնշումն ընկնում ե: Արևմուտքից կամ հարավարևմուտքից նկատելի արագութիւնը փետրավոր ամպեր են շարժվում, հետո յերկիրնքը ծածկվում ե շրտավոր ամպերի շերտով, այդ դեպքում անձրև պետք ե սպասել, իսկ ձմեռը՝ ձյուն:

Ամառը հարաբերական խոնավութիւնն որական ընթացքը փոքրանում ե, բացարձակ ե հարաբերական խոնավութիւններն ընդհանրապես մեծանում են:

10. Կայուն յեվ վտար յեղանակի հասկանիւթները.— Մթնոլորտային ցածր ճնշումը քիչ փոփոխվում ե ե որվա ընթացքում նվազում:

Քամին իր ուղղութիւնը քիչ փոխում ե: Քամու ուժը լինում ե բավականին զգալի, սովորական որական տատանում չի նկատվում:

Ձմեռ ժամանակ յերկիրնքը ծածկված ե լինում շերտավոր կամ անձրևային ամպերով: Ամառն ամեն ժամանակ ամպերը միատեսակ շերտ չեն կազմում:

Որի բարեխառնութիւնը լինում ե բավականին հաստատուն՝ որվա փոքր ընթացքով, թե հարաբերական ե թե քաղցարձակ խոնավութիւնները մեծ են ե հաստատուն: Ամառը կարող են լինել փոքր ողային ընթացքով, բայց վոչ այնպես ուղիղ, ինչպես լավ յեղանակի դեպքում:

11. Յեղտեակը քիչ լավ փոխվելու հասկանիւթները.— Մթնոլորտային ճնշումը մեծանում ե: Քամին իր ուղղութիւնը փոխում ե ուժեղ կերպով ու ընդմիջումներով ե փչում: Ամպամածութիւնը լինում ե փոփոխական ե յերկնքում առաջ են դալիս

պարզ տեղեր (բաց տեղեր), ժամանակ առ ժամանակ ամբողջ
յերկիրն քր կարող ե ծածկվել ներքևի անձրևային ամպերով: Անձ-
րեր կամ ձյունը կարող ե բնդմիջումներով տեղալ ե բայկանին
ուժեղ լինել ու համատարած տեղումներ չնկատվեն:

Ամառը յեղանակը դեպի լավր զնայիս ողի բարեխառնու-
թյունը հաճախ նվազում ե Որինսկ՝ 1933 թ. հուլիսի 4-ին Յե-
րևանում անձրև տեղաց, վորից հետո ողի բարեխառնությունը
նվազեց, հուլիսի 5 ին լավ յեղանակ յեղալ:

Ողի բարեխառնության որական ընթացքն ամառն ավելի
ուղիղ ե լինում ե նկատելի:

12. Անձրեվի յեվ վտս յեղամտի ժողովրդական նեանները,
վոր հաստատել ե նայել գիտությունը.—Անձրեից առաջ մարդու
վտակորները կտարատվում են, ծաղիկներն սկսում են ուժեղ կեր-
պով բուրել, ծիծեռնակները ցածր են թռչում: Տավարը շուր քիչ
ե խմում ե շատ քնում. հավեր, շուտ են նստում ձու անկա,
կամ փողու մեջ թավալում են, մեղուները հեռու չեն թաչում,
աստղերը, մանավանդ առավոտները, սովորականից պայծառ են
փայլում (պլպում) ե այլն:

13. Ապսիկտիկ յերեւոյթներ մքնուորում

Պատկ.—Մթնոլորտային ոպտիկական յերեւոյթներն արժե-
քավոր են այն բանով, վոր գիտելու միջոցով մեզ համար վորոշ
չափով կպարզվեն մթնոլորտի վերին շերտերում կատարվող
պրոցեսները:

Մթնոլորտային ոպտիկական յերեւոյթները շարքն ամենից
առաջ դասվում են արևի ե լուսնի շուրջն առաջ յեկած պտակները:

Յերբ արևը կամ լուսինը ծածկվում են բարձր շերտավոր
ամպերի բարակ շերտով, նրանց շուրջը հաճախ տարբեր մեծության
ու գույների շրջաններ են առաջ գալիս:

Պսակ առաջ ե գալիս թե արևի ե թե լուսնի շուրջը: Շատ
գեպքերում արևի ճառագայթները թույլ չեն տալիս լուսնի ու
արևի շուրջն առաջ յեկած պտակ տեսնել: Բայց մրոտած ապա-
կու միջոցով կարելի յե տեսնել:

Արևի կամ լուսնի ճառագայթներն անցնելով ողում գտն-
վող ջրի կաթիլների ե սառցե բյուրեղների միջոցով՝ պտակ են
առաջ բերում: Պսակ առաջ գալու համար անհրաժեշտ ե, վոր
ջրի կաթիլները կամ սառցի բյուրեղները միատեսակ (միևնույն
մեծության) լինեն, հակառակ դեպքում կստացվեն տարբեր մե-

ծության մի շարք պտակներ, վորոնք իրար վրա ընկնելով ուղի-
տակ շրջան կտան:

Պսակներն ընդհանրապես ներսի կողմից կանաչ-կապույտ
գույն են ունենում, իսկ դրսից՝ կարմրավուն գույն, վոր թագ ե
կոչվում:

Պսակներն ամեն ժամանակ միևնույն պարզ ու պայծառ
գույները չեն ունենում:

Բարձր շերտավոր, կտրատված շերտավոր, նույնպես կըտ-
րատված կույտա-շերտավոր ամպերի ժամանակ պտակներն այն-
քան ել գեղեցիկ չեն լինում: Մեծ մասամբ տեսանելի յե լինում
միայն թագը: Յերբեմն ել թագում բացակայում ե կարմիր գույնը,
միայն լինում ե ամպավուն սպիտակ փայլը:

Գեղեցիկ պտակներ առաջ են գալիս սառցե բյուրեղներից
կազմված ամպերի ժամանակ, որինսկ՝ թեթե, սպիտակ փետրա-
կույտավոր ե բարակ փետրա-շերտավոր ամպերի ժամանակ: Այդ
գեպքում գույները լինում են պայծառ, ե յերբեմն թագը շրջա-
պատված ե լինում լրացուցիչ շրջաններով:

Շատ գեպքերում պտակը դեղին գույն չի ունենում, ե կար-
միր շրջանն անմիջապես միանում ե ամպաղույն շրջանին: Պսակ-
ների մեծությունը շատ տարբեր ե լինում: Թագի՝ կարմիր շրջ-
անի անկյունային շառավիղը 1 աստիճանից փոքր ե լինում,
իսկ յերբեմն ել մինչև 5 աստիճան ե լինում:

14. Պատկի միջոցով յեղամտի ինչպես պեճ ե նախտեսովի.

Պսակի ուսումնասիրությունն ունի նաև այն նշանակությունը,
վոր մեզ հնարավորություն ե տալիս նախատեսել գալիք յե-
ղանակը:

Յեղանակները նախատեսելու համար հարկավոր ե տարբե-
րել վերևի ե ներքևի ամպերին պատկանող պտակները: Առաջին-
ները միշտ հատկանիշներ են անձրևային յեղանակների, վորով-
հետև նրանք առաջ են գալիս փետրա-կույտավոր (CiCu), փետ-
րա-շերտավոր (CiSt) ե բարձր շերտավոր ամպերի ժամանակ,
վորոնք, ինչպես վերևում տեսանք, իրենք ես հանդիսանում են
այդպիսի յեղանակների հատկանիշներ: Այդ հաստատվում ե նաև
նրանով, վոր շատ գեպքերում պտակը յերևում ե գալոյի հետ
միասին, վորը ցիկլոնի մոտեցման լավ հատկանիշ ե հանդիսա-
նում, վորի մասին կրոսենք ներքևում:

Ներքևի ամպերին (վորոնք բազկացած են ջրի մանր կա-
թիլներից) պատկանող պտակները կարելի յե բաժանել յերեք


խմբի 1) փոքր մեծութուն ունեցողներ, 2) միջին մեծութուն ունեցողներ և 3) մեծեր Փոքր պսակների տեսանելի շառավիղը հավասար է մոտ 1 աստիճանի, միջին մեծութուն ունեցողներին շառավիղը հավասար է 1 աստիճանից մինչև 2 աստիճանի, մեծ պսակներին շառավիղները՝ 2 աստիճանից մինչև 5 աստիճանի։ Սրանք վերաբերում են թագի կարմիր գույնին։

Տեսութունն ու փորձը ցույց են տվել, վոր պսակի մեծութունը կախում ունի ջրի կաթիլների և սառցի բյուրեղների մեծութունից։ Ջրի կաթիլները կամ սառցի բյուրեղները վորքան փոքր լինեն, պսակն այնքան մեծ կլինի, և ընդհակառակը։

Պսակի մեծութունը չափելով կարելի չե հաշվել ջրի կաթիլների կամ սառցի բյուրեղների մեծութունը, վորոնցից կազմված է ամպը։

Պսակի կարմիր գույնի դրսի մասի շառավղի մեծութունն արտահայտված աստիճաններով կլինի պսակի մեծութունը։

Յուրաքանչյուր դիտող ինքը կարող է պսակը չափելու հա-



Նկ. 10. Պսակը չափելու գործիք

մար հասարակ գործիք պատրաստել։

Պատրաստում են փայտե (կարելի չե նաև մետաղե) ձող, 57, Յանտիմետր յերկարությամբ։ Այդ ձողն ընդունելով վորպես շառավիղ՝ մի շրջագիծ են գծում և վերցնում այդ շրջագծի մի մասը (2 սմ յերկարությամբ պատրաստում փայտից և ամրացնում ձողի (A) ծայրին, այնպես, վոր ձողը վերջինիս ուղղաձայաց և մեջտեղը լինի։ Այդ շրջագծի մասի մեջտեղը (O) մի բարակ մեխ խփել՝ սուր ծայրը դեպի վեր։ Դրանից աջ և ձախ խփել 6-ական մեխ, վորոնք իրարից մի սանտիմետր հեռավորության վրա լինեն։ Ձողի մյուս ծայրի վրա մի դիտարար (C) յեռ ամրացնում 4 միլիմետր տրամագիծ ունեցող անցքով։

Իրավարայի անցքից նայելով՝ իրար հարևան մեխերի տարածութունը կերևա մեկ աստիճան անկյունով։ Այսպիսի գործիքով կարելի չե չափել պսակի մեծութունը հետևյալ կերպ. դիտողը C անցքից լուսնին այնպես պետք է նայի, վոր B մեջտեղի (O-ում յեղած) մեխը համընկնի լուսնի կենտրոնի հետ և

տեսանց գործիք շարժելու նայի դեպի այլ կամ ձախ, տեսներորդապիստատիճանի ճշտությամբ, հաշվի լուսնի կենտրոնից մինչև պսակի կարմիր շրջանի դրսի մասի հեռավորության մեծութունը։ Պետք է հաշվել մի քանի անգամ և վերցնել միջին մեծութունը։

Պսակի շառավղի մեծութունը չափելով կարելի չե հաշվել ամպի կարգերի մեծութունը։

Պսակի շառավղի մեծութուն (կարմիր շրջանի դրսի մասի շառավղի) և ջրի կաթիլի մեծության միջև ետ կապ կա՝ արտահայտված հետևյալ ֆորմուլայով։

$$r = \frac{m}{n} \cdot \frac{\lambda}{\text{Sin} \theta}$$

վորտեղ՝

r — կաթիլի շառավիղն է.

$$\frac{m_1}{n} = 9,610 \text{ առաջին կարգի պսակի համար է.}$$

$$\frac{m_2}{n} = 1,116 \text{ յերկրորդ } \gg \gg \gg \gg$$

$$\frac{m_3}{n} = 1,619 \text{ յերրորդ } \gg \gg \gg \gg \text{ և այլն:}$$

$\lambda = 0,000571$ մմ դիտվող պսակի գույնի ալիքի յերկարությունն է։

θ — կարմիր շրջանի դրսի մասի շառավիղն է (աստիճաններով), վորի մեծութունն իմանում ենք չափելու միջոցով։

Չափելուց հետո բոլորը մեզ հայտնի կլինի, բացի Ե-ից։ Արժեքները տեղադրելով ֆորմուլի մեջ և հաշվելով կլիմանանք Ե-ի արժեքը, այսինքն՝ կաթիլի մեծութունը։

Սառցե բյուրեղների համար հետևյալ ֆորմուլն է $a = m \frac{\lambda}{\text{Sin} \theta}$

a — բյուրեղի հաստութունն է.

m — պսակի կարգն է (1, 2, 3 և այլն)։

Այնպատանքը հեշտացնելու և ժամանակը կարճացնելու նպատակով՝ առաջին կարգի պսակի համար այստեղ կրեքենք պատրաստի աղյուսակ, վոր կազմված է վերև հիշված ֆորմուլաներով։

Ֆորմուլից կամ աղյուսակից ողավելու համար հարկավոր է գիտված շառավղից (լուսնի կենտրոնից մինչև կարմիր շրջանի դրսի մասը) հանել լուսնի շառավիղը։

Լուսնի շառավիղը 16° , մեր նպատակների համար կարելի չե վերցնել դրան հավասար $0,3^\circ$ ։

Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Կ

Ամպի էլեմենտը հաշվելու համար (1-ին կտրգի պատկի համար)

Չրի կաթիլներ				Սառցե բյուրեղներ			
Պատկի շտապ-վիդը	Կաթիլի մաս-մեարմնի միջին մասը	Պատկի շտապ-վիդը	Կաթիլի մաս-մեարմնի միջին մասը	Պատկի շտապ-վիդը	Բյուրեղի հաստու-թյունը	Պատկի շտապ-վիդը	Բյուրեղի հաստու-թյունը
0 ⁰		3,1	0,0128	0 ⁰		3,1	0,0106
0,1		3,2	0,0124	0,1		3,2	0,0103
0,2		3,3	0,0221	0,2		3,3	0,0100
0,3	0,1090	3,4	0,0117	0,3	0,1070	3,4	0,0097
0,4	0,0852	3,5	0,0 13	0,4	0,0800	3,5	0,0094
0,5	0,0700	3,6	0,0110	0,5	0,0654	3,6	0,0090
0,6	0,0617	3,7	0,0108	0,6	0,0535	3,7	0,0088
0,7	0,0556	3,8	0,0105	0,7	0,0464	3,8	0,0086
0,8	0,0501	3,9	0,0102	0,8	0,0412	3,9	0,0084
0,9	0,447	4,0	0,0100	0,9	0,0367	4,0	0,0082
1,0	0,0399	4,1	0,0098	1,0	0,0326	4,1	0,0080
1,1	0,0364	4,2	0,0096	1,1	0,0297	4,2	0,0078
1,2	0,0333	4,3	0,0093	1,2	0,0271	4,3	0,0076
1,3	0,0306	4,4	0,0091	1,3	0,02 0	4,4	0,0074
1,4	0,0284	4,5	0,0089	1,4	0,0232	4,5	0,0072
1,5	0,0265	4,6	0,0087	1,5	0,0217	4,6	0,0071
1,6	0,0249	4,7	0,0085	1,6	0,0204	4,7	0,0069
1,7	0,0234	4,8	0,0083	1,7	0,092	4,8	0,0068
1,8	0,0222	4,9	0,0082	1,8	0,0183	4,9	0,0066
1,9	0,0210	5,0	0,0081	1,9	0,0173	5,0	0,0065
2,0	0,0200	5,1	0,0079	2,0	0,0164	5,1	0,0063
2,1	0,0190	5,2	0,0078	2,1	0,0156	5,2	0,0062
2,2	0,0181	5,3	0,0076	2,2	0,0148	5,3	0,0061
2,3	0,0173	5,4	0,0075	2,3	0,0142	5,4	0,0060
2,4	0,0166	5,5	0,0074	2,4	0,0136	5,5	0,0059
2,5	0,0159	5,6	0,0072	2,5	0,0131	5,6	0,0058
2,6	0,0153	5,7	0,0071	2,6	0,0125	5,7	0,0057
2,7	0,0147	5,8	0,0070	2,7	0,0121	5,8	0,0056
2,8	0,0142	5,9	0,0069	2,8	0,0117	5,9	0,0055
2,9	0,0137	6,0	0,0068	2,9	0,0113	6,0	0,0054
3,0	0,0133			3,0	0,0109		

Աղյուսակից ոգտվելու որինակներ.

1. Դիցուք թե դիտելու ժամանակ փետրավոր ամպից (C1) լուսնի շուրջն ստացված պսակի շառավիղը յեղել է 1,4⁰, Հանելով լուսնի շառավիղը 0,3⁰, կստանանք 1,1. Աղյուսակում 1,1-ը բյուրեղների համար կտա 0,0297 միլիմետր հաստութուն:

Դիցուք թե ամառը դիտելիս վերին կույտավոր ամպերից ստացված պսակի շառավիղը հավասար էր 2,8⁰, դրանից հանելով լուսնի շառավիղը՝ 0,3⁰, կստանանք 2,5, վորին հավասար աղյուսակից կստանանք կաթիլի տրամագիծը (մեծութունը)՝ 0,0159 միլիմետր:

Ինչպես վերն ասացինք, ջրի մանր կաթիլներից բաղկացած են կույտավոր (Cu), շերտավոր (St), շերտա-կույտավոր (StCu), բարձր շերտավոր (AlSt), բարձր կույտավոր (AlCu), կույտա-անձրևային ((unb) և անձրևային (Nb) ամպերը: Սառցի բյուրեղներից կազմված են փետրավոր (C1), փետրա-շերտավոր (C1St), փետրա-կույտավոր (C1Cu) ամպերը:

Պսակները դիտելու համար հարկավոր է կազմել հատուկ տեսարակ, վորի մեջ անհրաժեշտ է գրել. 1) դիտման տեղը, 2) տարին, ամիսը և ամսաթիվը, 3) ժամը և րոպեն, 4) ամպա-մածութունը, 5) ամպերի տեսակը, վոր ծածկել է լուսինը և պսակ առաջացրել, 6) պսակի շառավիղի մեծութունը լուսնի կենտրոնից, 7) պսակի շառավիղի մեծութունը՝ առանց լուսնի շառավիղի, 8) ջրի կաթիլի տրամագիծի մեծութունը կամ սառցի բյուրեղի հաստութունը, 9) ծանոթութուն (դիտված է, վոր կարգի պսակ, ձևը, գույնի պայծառութունը և այլն):

Բերենք մի քանի որինակներ, վորոնք ստացվել են Սլուց-կում՝ մագնիտական և մետեորոլոգիական որսերվատորիայում պսակը չափելիս:

(աղյուսակը տես էջ 59)

Պսակի մեծության չափումը դիտության համար մեծ նշանակութուն ունի, քանի վոր այդ չափումների միջոցով մենք կարող ենք իմանալ ամպի տարրերի մեծութունը:

Հաջորդաբար դիտումներ կատարելով կարելի յն նորից հավաքել տարբեր ձևի ու բարձրության ամպերը՝ նրանց տարրերի մեծութունն իմանալու համար:

Տարի, ամիս թիվ	Ժամ և րոպե	Արտաձու- թյուն	Լուսինը ժամ- կազմակերպ տեսակը	Պայտի շառա- վերը լուսնի կենտ.	Պայտի միջին շառավիղը	Պայտի ուղղանկ շառավիղը	Ջրի կաթիլի տրամագիծը զամբյուղի հաստ. թ.	ՄԱՆՈՒՑՈՒՄ.
1923—1—3	6 ժ. 48 ր. յերեկոյան			1,4 1,3 1,5 1,5	1,4	1,1	0,0297 մմ	Բյուրեղ. Ջրի կաթ- իլի պատկ
1923—2—21	7 ժ. 40 ր. յերեկոյան			0,8 0,7 0,8 0,7 0,7	0,7	0,4	0,0852 >	Ջրի կա- թիլ
1924— —14	10 ժ. 00 ր. յերեկոյան			4,7 4,5 4,8	4,7	4,4	0,0093 >	Ջրի կա- թիլ՝ ալի- քային
1926—2—23	10 ժ. 23 ր. յերեկոյան			5,4 5,2 5,0 5,2	5,2	4,9	0,0082 >	Ջրի կա- թիլ

Նույնպես հետաքրքիր է իմանալ միևնույն ձևի ամպերի տարրերի մեծությունը տարբեր տեղերում և տարվա տարբեր ժամանակներին (յեղանակներին)։

Շատ արժեքավոր է ցիկլոնային և անտիցիկլոնային տիպի ամպերից առաջացած պսակի դիստրիբյուցիոն կատարելը՝ Որինսկի՝ փետրամպերը (C1), վոր տարբեր տեսք ունեն։

Հետաքրքիր է պարզել, թե ցիկլոնի և անտիցիկլոնի տարբեր մասերում ամպերի տարրերն ինչպիսի մեծություն ունեն։

Վերջապես պսակի ուսումնասիրությունը պարագող գիտության արամադրության տակ լրացուցիչ մատերիալ կունենա, վորով կկարողանա դատել, թե ինչպիսի փոփոխություն և կրելու յեղանակը։

Յեթն հետադականորեն չափելուց պարզվի, զոր պսակը փոքրանում է, կնշանակի, վոր ջրի կաթիլները կամ բյուրեղները մեծանում են, հետևաբար կարելի յե մթնոլորտային տեղումներ սպասել և, բնդնակառակը, յեթե պսակը մեծանում է, նշանակում է ջրի կաթիլները փոքրանում են, ուրեմն մթնոլորտային տեղումներ չեն լինի։

Անհրաժեշտ է, վորքան կարելի յե շուտ-շուտ՝ 15 բուպեն մի անգամ, 10 բուպեն մի անգամ դիտել. Նայած թե ինչ արագությամբ և կատարվում փոփոխությունը։ Յեթն պրոցեսն արագ և լինում, կարելի յե և 5 բուպեն մի անգամ դիտել, իսկ յեթե դանդաղ և լինում, կարելի յե 30 բուպեն մի անգամ դիտել։

Փոքր պսակները ցույց են տալիս ջրի մեծ կաթիլներ, ուրեմն՝ փոքր պսակներն անձրևային յեղանակի հատկանիշներ են, իսկ մեծ պսակները՝ շրային յեղանակի հատկանիշներ (Յերեկոյանում ոգոստոսի 6-ից լույս 7-ի դիչերը լուսնի շուրջը պսակ յեղակաց, վորը քանի դնաց մեծացավ. ոգոստոսի 7-ին տեղումները գաղարիցին)։

Վերևում ասացինք, վոր պսակի և գալոյի միտոսին յերևալը ցելլանի մոտեցման լավ հատկանիշ է։ Սեյերը ցույց տվեց, վոր գալոն ու պսակը հաճախ մի որում են առաջ գալիս, բայց ջրի և պատահում, վոր յերկուսն ևլ միևնույն ժամանակ առաջ գան։ Դալոյի առաջացման համար համեմատականորեն մեծ բյուրեղներ են պահանջվում։ Մեծ բյուրեղներն առաջ են գալիս վոչ անմիջապես, այլ հաջորդաբար։ Հետևապես, սկզբում պսակը պետք է պես, այլ հաջորդաբար։ Հետևապես, սկզբում պսակը պետք է առաջ գա և հետո բյուրեղներն յե մեծանալով առաջ գա գալոն։

Կարող են և մեծ բյուրեղները փոքրանալ։ Այդ դեպքում սկզբում առաջ և գալիս գալոն և հետո՝ պսակը։ Վերոնշյալների սկզբում առաջ և գալիս գալոն և հետո՝ պսակը։ Վոր յեթե սկզբում պսակն և առաջ գալիս և ապա գալոն և փոխարինում նրան, այդ դեպքում պետք է սպասել յեղանակի վատացում և մթնոլորտային տեղումներ։ յեթե սկզբում առաջ և գալիս գալո, վորին փոխարինում և պսակը, լավ յեղանակ պետք և սպասել։

Որինսկի՝ ապրիլի 23-ին յերկինքը պարզ եր, Մասիս սարի գագաթը ամպամած, հորիզոնի մոտ, արեմուտքում և հարավում՝ ջրի ամպեր (կույտավոր ամպեր կոչին)։ Ապրիլի լույս 24-ի դիչերը ժամը 1 և կեսին փետրամպեր յերևացին, լուսինն արեմուտքի կողմն եր դառնվում, լուսնի շուրջը պսակ առաջ յեկավ։

վարից հետո՝ գալու. 5 բողոքից հետո գալուն անհետացավ, որպէս
փոքրացավ, կարմիր գույնն ավելի ցայտուն յիւրեաց, նորից խա-
վարից և յերկար ժամանակ մնաց նույն վիճակում. Ժ. 1 և 50 բ.
կարմիր գույնը նորից պայծառ յելեաց, Ժամ. 2 և 5 բողոքին գույնը
նվազեց, Ժ. 2 և 12 բ. և սպակը խավարից և անհետացավ: Փետրամ-
պիւրը դեպի արևելք ելին շարժվում: Ապրիլի 24-ին յեղանակը
վատացավ, անձրև տեղաց, այդ յեղանակը շարունակվեց մինչև
ապրիլի 27-ը:

Յեթե ձմեռը լուսատու մարմնի շուրջը մեծ տրամագիծ ու-
նեցող սպիտակ շրջան առաջ գա, պետք է սպասել, վոր անտի-
ցիկլոնային տիպի յեղանակը կշարունակվի մնալ 12 ժամից
ավելի և սառնամանիքներ կարելի յե սպասել:

15. Միաժամ.—Միաժամը մի շրջագիծ է՝ կազմված արևի
սպեկտրի՝ զանազան գույններից: Միաժամի կենտրոնը գտնվում է
այն ուղիղի շարունակութան վրա, վորը դիտողի աչքը միացնում
է արևի հետ: Միաժամի դուրսը կարմրագույն է, իսկ ներսը՝ մա-
նիշակագույն:

Միաժամն առաջ է գալիս անձրևի ժամանակ, կամ տնմի-
ջպակն հետո (յեթե արև է լինում): Արևի ճառագայթները ջրի
կաթիլների միջով անցնելիս բեկվում են: Արևի յուրաքանչյուր
ճառագայթ բաղկացած է մի քանի գույնից (7 գլխավոր գույն),
վոր միասին սպիտակ գույն են տալիս: Ճառագայթի բեկման
ժամանակ տարբեր գույնը տարբեր անկյունով է բեկվում, վո-
րի պատճառով գույներն առանձին-առանձին ենք տեսնում:
Միաժամի առաջ գալու պատճառն այն է, վոր արևի ճառագայթ-
ներն անձրևի կաթիլների միջով անցնելիս բեկվում են: Միաժամն
առաջ է գալիս արևի հակառակ կողմում. դիտողի մի կողմում
արևը կլինի, իսկ մյուս կողմում՝ ծիածանը. որինակ՝ յեթե դի-
տողը ծիածանին է նայում, այդ ժամանակ նրա դիմացը ծիա-
ծանը կլինի, իսկ հետը՝ արևը: Յեթե արևը հորիզոնին մոտ է,
ծիածանը մեծ է լինում (կիսաշրջան), իսկ յեթե բարձրանում է,
ծիածանը կարճ է լինում (կիսաշրջանից փոքր):

Յերբեմն առաջին կարգի ծիածանի հետ լինում են և յերկ-
րորդական ծիածաններ, յերբեմն դրանց թիվը հասնում է մինչ-
ոչ 6-ի:

Յերբեմն ծիածանի վրեն գույն բացակայում է, մեծ մա-
սամբ բացակայում են կապույտ և մուգ-կապույտ գույները:

Նույնպես և մաքուր կարմիր գույնը Առանձին գույների շերտի
լայնութունը տարբեր դեպքերում տարբեր է լինում:

Յերբեմն լուսնից է ծիածան առաջ գալիս. այս ծիածանն
սպիտակ գույնի յե լինում, թեթև կերպով գունավորված:

Յեթե ծիածանը մնում է վորոշ ժամ անակ, որինակ՝ 15 բո-
պե, 20 բոպե, 30 բոպե և այլն, հետաքրքիր է հետևել. թե նրա
գույնների պայծառութունն արդյոք չի փոխվում, յեթե փոխվում
է, վոր կողմն է փոխվում: Յեթե սկզբում ծիածանը կարմիր գույն
չունի, իսկ հետո առաջ յեկավ և ուժեղացավ, այդ նրանից է,
վոր ջրի կաթիլները մեծանում են, այսինքն, ավելի անձրևային
է լինում: Յեթե հակառակ յերևութ տեղի ունենա, այսինքն՝
ծիածանն առաջ կարմիր գույն ունենա, վոր քանի գնա, անհե-
տանա, այդ կնշանակի, վոր անձրևային յեղանակին շուտով վերջ
կլինի:

Մինչև որս այդպիսի դիտողութուններ համարյա կատար-
ված չեն յեղել և դրա համար ել դժվար է դատել՝ արդյոք է
հնարավոր և այդպիսի կարճ ժամանակամիջոցում (ծիածանը
կտրճատե է) հետևել ծիածանի գույների փոփոխմանը: Յեթե
հնարավոր է, այդ դժվարում ինչ չափով կարող է ծառայել վոր-
պես յեղանակի հատկանիշ:

Յերևանում իմ դիտողութունների ժամանակ նկատեցի հե-
տեյալը. 1933 թ հունիսի 12-ի յերեկոյան ժամը 7 և 30 բ. անձրև
տեղաց և ծիածան առաջ յեկավ, վոր պայծառ գույն ուներ և
այդ պայծառութունը մնաց մինչև վերջ: Անձրև տեղաց նաև
հունիսի 14-ին, յերեկոյան Ժ. 7 և 15 բոպեյին ծիածան առաջա-
ցավ, վորի կարմիր գույնը քանի գնում թուլանում էր, բայց
չատ գաղաղ կերպով: Յերեկոյան մոտ ժամը 8-ին անձրևը դա-
ղարեց, գիշերն ամպերի թիվը պակասեց, և հունիսի 15-ի առա-
վոտը յերկինքը համարյա պարզ էր, իսկ կեսօրից հետո նորից
սկսեց ամպերի թիվը շատանալ, և հունիսի 15-ին, ժամը 24-ին
սկսեց մինչև լույս ընդմիջումներով թեթև անձրև տեղալ:

Ինչ վերաբերում է սպիտակ ծիածանին, այն շատ հազվա-
գյուտ է և առաջ է գալիս մառախուղի ժամանակ: Յեթե աստի-
ճանաբար այն փոխվի սովորական ծիածանի, կնշանակի, վոր մա-
ռախուղի մասնիկները մեծանալով վեր են սծվում անձրևային
կաթիլների, վոր տեղի յի ունենում անձրևային յեղանակից առաջ:
Ընդհակառակը, յեթե սովորական ծիածանն իր գույնն աստի-
ճանաբար կորցնելով սպիտակ ծիածանի փոխվի, նշանակում է,

վոր անձրերը վեր ե անձրում մատախուղի, վորին սողորարար հաջորդում ե անտիցիկոնային տիպի յեղանակը:

Յեթե ծրածանի վրա կանաչ գույնն ե գերակրում, այդ նշանն ե չորային յեղանակի: Յեթե մի վորեն տեղ ծրածանն ե յերևում, նշանակում ե, վոր դիտողից զեպի այդ կողմն անձրե ե տեղում: Վորպեսզի իմանանք՝ անձրերը մեզ կհասնի, թե վոչ, ուղղորությունն պետք ե դարձնենք քամու ուղղության վրա, ապիւրի լավ ե՝ ամպերի շարժման վրա: Յեթե նրանք զեպի մեզ են ուղղված, անձրե պետք ե սպասել:

16. Լուսատու մարմինների պլպլայր.— Լուսատու մարմինների պլպլայն այն ե, վոր աստղերն իրենց պայծառությունը գույնն ու դիրքն արագ փոխում են: Պլպլայր վերջին տեսքը նաև գողողալ ե կոչվում:

Ղանյորներն աստղերից տարբերվում են իրենց հավասար ե հանդիստ լույսով, իսկ յեթե յերբեմն պլպլում են, աստղերից թույլ են պլպլում: Պլպլայր պատճառների մասին տարբեր բացատրություններ կան:

Հորիզոնի մոտ գտնվող աստղերն ավելի ուժեղ են պլպլում, քան վերևում գտնվողները:

Պրոֆ. Հումբոլդտը ցույց տվեց, վոր արողիկական յերկրում աստղերի պլպլայր միջոցով մի քանի որ առաջ կարելի յե նախատեսել անձրևային յեղանակը. կեմացի տեսակետով փոթորկի ժամանակ աստղերի պլպլայն ավելի ուժեղ ե: Այս բանը հաստատում են նաև բելգիական գիտնական Մոնտինի 19-րդ դարի 70 և 80-ական թվականների դիտողությունները*):

Մոնտինը 120 աստղի վրա 25000 դիտողություն կատարեց: Նրա դիտողություններից պարզվեց, վոր աստղերի ուժեղ պլպլայն այն դեպքում ե լինում, յերբ Արևմտյան Յեկրոսայում ցիկլոն ե լինում և մանավանդ ուժեղ ե լինում, յերբ ուժեղ փոթորիկ ե սկսվում:

Մոնտինի հետազոտությունները ցույց տվին, վոր լուսատու մարմինների պլպլայն ողի հիդրոմետորոլոգիական գրության հետ ուղիղ հարաբերության մեջ ե գտնվում: Լուսատու մարմինների պլպլայր մեծանում ե անձրերը մոտենալու

*) Montigni Bullde RAcad ragale de Belgique Ser 2 T XLVI 1878 № 11 էջ 598 շեմ 1879 219. հունիս 3 serie T 1887 M. z. 1887 [53]|| z.f.M. 1888 [53]|| z.f.M 1888 [53].

և անձրերի ժամանակ և փոքրանում ե անձրերը դադարելու ժամանակ: Պլպլայր մեծանում ե ցիկլոնի մոտեցման ժամանակ և մաքսիմում մեծությունն ե ստանում բարոմետրական միջնումի անցած տեղում: Ցիկլոնի հեռացումից պլպլայր փոքրանում ե: Ձյունն ու սառցի բյուրեղները մթնոլորտի վերին շերտերում պլպլայն ուժեղացնում են:

Ձմեռը պլպլայն ավելի ուժեղ ե քան ամառը: Ձերմաստիճանի մեծացումից պլպլայր փոքրանում ե, իսկ շերմաստիճանի փոքրացումից ուժեղանում, վոր ավելի ուժեղ ե նկատվում ամառը:

Ձմեռը՝ սաստիկ ցուրտ ժամանակ պլպլայն ուժեղ ե, և աստղերը պարզ փայլ են ձեռք բերում:

Մոնտինին պլպլայր ուժը (թափը) վորոշեց սցինցիլոմետրի միջոցով՝ մեկ վայրկյանում աստղի գույնի փոփոխման քանակով:

1886 թ. դեկտեմբերի 1-ի յերեկոյան, յերբ մետեորոլոգիական գործիքները փոթորկի մոտեցում ցույց չեյին տալիս, Բրյուսելում Մոնտինին աստղերի ուժեղ պլպլոց նկատեց: Դրանից մի քանի ժամ հետո բարոմետրական ճնշումն սկսեց ընկել, քամին ուժեղանալ, իսկ դեկտեմբերի 8-ից մինչև 10 ը փոթորիկ տեղի ունեցավ: Հավանական ե, դեկտեմբերի 7-ին բարձր շերտերում հուզում ե առաջ յեկած յեղել, իսկ ներքևում նրանց վոչ մի հատկանիշ չի յեղել:

Մոնտինին նկատեց, վոր յերբ անձրերը մոտենում ե կամ անձրե ե տեղում, այդ ժամանակ սցինցիլոմետրի մեջ առաջ յեկած շրջանում կապույտ գույնն ե գերակշռում:

1920 թ. մարտի 22-ին, 23-ին և 24-ին Լենինգրադում կիսալուսինը կանաչ գույն ուներ, յեղանակը պարզ եր և չորային. նույն յեղանակը շատ քիչ փոփոխություններով շարունակվեց ամբողջ ամառը. ինչպես յերևում ե, չոր ողը լուսատու մարմին կանաչ կամ կանաչավուն գույն ե տալիս:

1920 թ. մարտի 20-ին Լենինգրադում աստղերն ավելի ուժեղ եյին պլպլում, վորից հետո (գիշերը) ձյուն-բուք սկսեց, իսկ առավոտն ուժեղ (մեծ քանակությամբ) ձյուն տեղաց: Բարոմետրական ճնշումն ընկավ և սկսեց տաքանալ:

17. Մանիսի սցինցիլոմետրի կառուցվածքը.— Մոնտինի սցինցիլոմետրը բաղկացած ե կլոր, հաստ (6,4 միլիմետր) ապակյա թիթեղից, վորը տեղավորված ե խողովակում՝ որեկտիվ ե

Ֆոկուսի մեջտեղում, թեքված դեպի խողովակի ուղղակի առանցքը և շրջում է առանցքի շուրջը: Ճառագայթներն անմիջապես անցնելով պլաստինկայի միջով՝ յեզրային տեղափոխություն (бoкoвoе смeщeниe) են կրում, վորի հետևանքով աստղի պատկերը, վորին ուղղված է խողովակը, տեսողության դաշտում լրիվ շրջապիտ է գծում: Յեթե աստղն իր գույնը չի փոխում, այդ ժամանակ շրջագիծը միատեսակ գույն է ունենում, իսկ յեթե փոխում է, այդ ժամանակ շրջագիծը վրա զանազան (տարբեր) գույնավորում է առաջ գալիս: Այդ գույները համապատասխանում են պլաստինկայի մի պտույտ կատարելու ժամանակամիջոցում տեղի ունեցած աստղի գույների փոփոխմանը: Հաշվելով մի վայրկյանում պլաստինկայի կատարած պտույտի թիվը՝ կարելի յե վորոշել, թե մի վայրկյանում աստղը քանի անգամ է իր գույնը փոխել:

18. Որկայաններն ու նրանց տեսակները. — Այն կայանները, վոր գործիքների միջոցով, կամ առանց գործիքների ոգերևութաբանական դիտողություններ են կատարում, կոչվում են ողկայաններ: Ողկայաններ կան ԽՄՀՄ-ում և մյուս յերկրների բոլոր մասերում: Վորպեսզի կարելի լինի ոգավել նրանց կատարած դիտողություններից և մեկի դիտողությունը համեմատել մյուսի դիտողության հետ, անհրաժեշտ է, վոր բոլոր ողկայանները միաժամանակ և միատեսակ դիտողություն կատարեն: Ողկայաններն ըստ իրենց աշխատանքի ծրագրի բաժանվում են յերեք կարգի:

3-րդ կարգի ողկայանները կատարում են մթնոլորտային տեղումների տեսակի ու քանակի, ձյունածածկոցի, ջրի բացվելու և սառչելու, մթնոլորտային հատուկ յերևույթների, այն է՝ մառախուղի, բքի, ամպրոպի, ոպտիկական յերևույթների դիտումներ, վորի համար վորեն գործիք չի պահանջվում, բացի մթնոլորտային տեղումների քանակը վորոշելուց:

2-րդ կարգի ողկայանները, բացի վերոհիշյալ դիտումներից, կատարում են նաև ողի ճնշման, ջերմաստիճանի և խոնավություն, քամու ուժի և ուղղության, ամպամածություն, գետնի մակերեսի ջերմաստիճանի, հորիզոնական տեսողության դիտումներ:

1-ին կարգի ողկայանները, բացի վերոհիշյալ հիմնական ծրագրից, կատարում են նաև հատուկ և լրացուցիչ այնպիսի ուսումնասիրություններ, վորոնք անհրաժեշտ են ամբողջ ցանցի

ընդհանուր աշխատանքների գիտական լուսարտման ու հիմնավորման համար—ունեն մի շարք գործիքներ, վորոնք անընդհատ գրի յեն առնում մթնոլորտային յերևույթները:

Հիմնական դիտողություններ կատարում են ամեն որ՝ ժամը 7-ին, 13-ին և 21-ին (Մոսկվայի ժամանակով) և արդյունքները գրում հատուկ գրքուկի մեջ. սինոպտիկական ողկայանները, բացի այդ ժամերից, դիտողություններ կատարում են նաև ժամը 19-ին և 0—1-ին:

19. Յեղանակի նախաեստումը սինոպտիկական փաթեղի միջոցով. — Հիշորմետվարչություններին կից նախատեսումներ է բաժիններ կան, վորոնք սինոպտիկական քարտեզի միջոցով տալիս են մեծ տերիտորիայի, ավելի յերկար ժամանակի համար, ավելի ուղիղ յեղանակների նախատեսումներ:

1-ին և 2-րդ կարգի ողկայաններն ամեն որ ժամի 7-ին, 13-ին և 19-ին, դրանցից մի քանիսը նաև ժամի 1-ին, 21-ին (ժ. 4-ի դիտողությունը հեռագրով չեն հաղորդում) դիտողությունների արդյունքները հեռագրով, հեռախոսով կամ ուղիղով անմիջապես հաղորդում են իրենց հանրապետական հիշորմետվարչության նախատեսումների բաժնին: Վերջինս նույն ժամանակների դիտողությունների արդյունքները ուղիղով ստանում են նաև ուրիշ հանրապետություններից և պետություններից (արտասահմանից): Այդ ստացված տեղեկությունները թվերով և նշաններով լրացվում են աշխարհագրական քարտեզի վրա, վորը կոչվում է սինոպտիկական քարտեզ*): Այսպես, ուրեմն՝ ամեն որ լրացվում են ժամը 07-ի, 13-ի, 19-ի և 01-ի սինոպտիկական քարտեզները:

Այդ սինոպտիկական քարտեզը ցույց է տալիս հյուսիսային կիսագնդի, դիտման մոմենտի յեղանակի դրությունը: Սինոպտիկական քարտեզները վրա հաջորդաբար ուսումնասիրելով յեղանակների կատարած պրոցեսները՝ կարելի յե տալ այդ պրոցեսների հետագա զարգացումը, այսինքն՝ սպասվելիք յեղանակը: Սպասվելիք յեղանակն ընդհանրապես տրվում է մեկ որվա, վորոջ տեղերում ել մինչև 3 որվա համար: Կան նաև յերկարատե (սեզոնային) նախատեսումներ: Նախատեսված՝ սպասվելիք յեղանակը հաղորդվում է ուղիղով միջոցով:

* Սինոպտիկո—հունարեն բառ է—նշանակում է ընդհանուրը տեսնել:

Հայաստանում սպասվելիք յեղանակների նախատեսում տալիս և Հայաստանի Հիդրոմետվարչության նախատեսումների բաժինը, վոր Յերևանում և գտնվում: Ամեն որ յերեկոյան բազիլոյի միջոցով հաղորդվում և վաղն սպասվելիք յեղանակը:

20. Գյուղում ի՞նչ պե՞տ և անի, վոր յեղանակը ճիշտ ստանալի.— Մեզ մոտ դեռ բոլոր գյուղերում ռադիո չկա, վորի պատճառով չեն կարող տեղյակ լինել սպասվելիք յեղանակի մասին: Իրա համար ել անհրաժեշտ և, վոր գոնե իրենք կարողանան տեղական հատկանիշների միջոցով նախատեսել սպասվելիք յեղանակը:

Հավ կլինի, յեթե ամեն մի կոլտնտեսություն կամ խորհատնտեսություն ոգերևութաբանական դիտումներ կազմակերպի— գոնե ոգերևութաբանական տնակ, ջերմաչափ, հողմացույց, անձրևաչափ և աներոփդ ձեռք բերի, ոգերևութաբանական դիտումներ կատարել սիրողների խմբակներ կազմակերպի և դիտումներ կատարի՝ վերջիններս գրանցելով առանձին գրքույկի մեջ և իրենց շրջանում գտնվող ոգկայանների հետ կապ պաշտպանի:

Վերոհիշյալ գործիքները ձեռք բերելու, սիրողների խմբակ կազմակերպելու և նրանց աշխատանքների ծրագրի վերաբերյալ տեղեկություններ կարելի յե ստանալ Հիդրոմետվարչությունից

ՌԴՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. С. Каральский — Погода и ее предсказания, изд. „Коммуна“ Воронеж 1932 г.
2. С. И. Небольсин—Предсказание погоды по местным наблюдениям, Гиз 1921 г.
3. Проф. В. А. Михельсон—О погоде и о том, как ее можно предвидет, Гиз 1928 г.
4. Пр. В. А. Михельсон — Краткий сборник научных примет о погоде.
5. Климат и погода в Ц Ч О — изд. „Коммуна“ 1932 г.
6. Пр. А. Ф. Вангенгейм—Первые облака как признак наступающей погоды.
7. Хромов—Карта погоды, изд. бюро погоды СССР 1931 г.
8. В. Д. Гэмфриз — Народные приметы и парадоксы погоды, перевод с Английского М. И. Жаркова.
9. Н. Н. Калитин — определение размеров облачных элементов по наблюдению венцов около луны.
10. Проф. П. И. Броунов—Атмосферная оптика Гиз. 1924 г.
11. Vuil, der Acad. Royale de Belgique, 2 serue. T. XLII, 1986 и T. XLVI 1878.
12. Ann der Hydrographie und Marit meteor, 1894.
13. Пр. Н. Н. Калитин — методы школьных наблюдений и предсказания погоды Гиз, 1925 г.
14. С. Н. Жарков — метеорологические наблюдения в школе, Гиз 1921 г.
15. Д. Демидова — Приметы и предсказания погоды.
16. А. Захаров—как крестьянину узнавать погоду.

Առաջաբան

I մաս

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ	7
1. Ող	8
2. Զերմաչափ	9
3. Ողերևութաբանական տնակ	10
4. Մթնոլորտն ու նրա ճնշումը	12
5. Մթնոլորտի շարժումը. ցիկլոն, անտիցիկլոն	14
6. Քամի	15
7. Հողմնացույցի նկարագրությունը	17
8. Քամու ուղղությունն ու արագությունը վորոշելը	18
9. Անեմոմետր	19
10. Զրային գոլորշիներն ու ամպերի առաջ գալը	20
11. Մթնոլորտային տեղումներ	21
12. Անձրևաչափի նկարագրությունը	22
13. Մթնոլորտային տեղումների չափը վորոշելը	23
14. Կայուն ողային գանգված	24
15. Անկայուն ողային գանգված	26
16. Արկտիկական ող	27
17. Բևեռային ող	28
ա) ծովա-բևեռային ող	28
բ) ցամաքա-բևեռային ող	29
18. Տրոպիկական ող	31
19. Ֆրոնտներ	31
ա) Տաք ֆրոնտ	32
բ) Ցուրտ ֆրոնտ	33
20. Յեղանակը ցիկլոնում և անտիցիկլոնում	33


ՅԵՂԱՆԱԿԻ ՆԱԽԱՏԵՍՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ

ՄԻՋՈՑՈՎ	36
1. Յեղանակի նախատեսումն ամպերի միջոցով	36
ա) Փետրամպերն ու յեղանակի նախատեսումը	37
բ) Կուլտավոր ամպեր	40
գ) Շերտավոր ամպեր	44
դ) Բարձր շերտավոր ամպեր	44
2. Ցող կամ յեղյամ	47
3. Յեղանակի նախատեսումն ողի բարեխառնության միջոցով	47
4. » » քամու միջոցով	48
5. » » մթնոլորտային ճնշման միջոցով	49
6. Տար ֆրոնտի հատկանիշները	50
7. Ցուրտ ֆրոնտի հատկանիշները	51
8. Կայուն և լավ յեղանակի հատկանիշները	51
9. Յեղանակը գեպի վառը գնալու հատկանիշները	52
10. Կայուն և վատ յեղանակի հատկանիշները	53
11. Յեղանակը գեպի լավը փոխվելու հատկանիշները	53
12. Անձրևի և վառ յեղանակի «ժողովրդական նշանները», վոր հաստատել և նաև գիտությունը	54
13. Ուլտիկական յիրևույթների մթնոլորտում—պսակ	54
14. Պսակի միջոցով յեղանակն ինչպես պետք և նախատեսվի	55
15. Ծիածան	62
16. Լուսատու մարմինների պլպլալը	64
17. Մոնտինի սցինցիլոմետրի կառուցվածքը	65
18. Ողկայաններն ու նրանց տեսակները	66
19. Յեղանակի նախատեսում սինոպտիկական քարտեզի միջոցով	67
20. Գյուղում թնչ պետք և անել վոր յեղանակը ճիշտ նախատեսվի	68
21. Գրականություն	69

Գրա. խմբ. Ա. Մարտիրոսյան
Տեխ. խմբ. Է. Մուրադյան
Լեզվ. խմբ. և սրբագրիչ՝ Գուր. Հակոբյան

Դիպլիմի լիազոր Ս—369, հրատ. № 309, պատվ. № 129, տիրած 2000
Հանձնված և արտոդրության 1936 թվի փետրվարի 16-ին
Մատրագրված և տպագրելու 1936 թվի մարտի 14-ին
4,5 տպագրական թերթ՝ 1 տպ. թերթու 38400 տպ. էջ.

Դիպլիմի տպարան, Յերևան, Եսայրիպյան № 11



Фр66 80 4.

251

12093



БИБЛИОТЕКА КОЛХОЗНИКА И РАБОЧЕГО СОВХОЗА

ЕДИНОЕ ГИДРО-МЕТЕОРОЛОГИЧЕСКОЕ УПРАВЛЕНИЕ СССР

В. АЙВАЗЯН

КАК ПРЕДВИДЕТЬ ЗАВТРАШНЮЮ ПОГОДУ

СЕЛЬХОЗГИЗ ЗРИВАНЬ 1936 Г.